



Արցախի Նախագահը Կոչ Ըրաւ Փութինին՝ Գործադրել Զանքերը Պատերազմի Դադրեցման Համար

Արցախի նախագահ՝ Արայիկ Յարութիւնեան բաց նամակ յղած է Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութինին: Յարութիւնեան կոչ ըրած է գործադրել բոլոր հնարաւոր ջանքերը ատրպէյճանադարաբաղեան հակամարտութեան գոտիին վրայ պատերազմի դադրեցման եւ քաղաքական գործընթացներու վերսկսման ուղղութեամբ:

Նամակի առաջին մասը ան գրած է, որ Արցախ-Ռուսաստան առնչութիւնները դարերու պատմութիւն ունին, յիշեցուցած է պատմութիւնը, յիշեցուցած, որ ԽՍՀՄ հաջգգի հինգ մարշալները արմատներով Արցախէն էին: Յարութիւնեանի խօսքով՝ Արցախ-Ռուսաստան սերտ առնչութիւնները կը շարունակուին ցայսօր:

«Կը ցանկանայի յատուկ շեշտել, որ ատրպէյճանա-դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման բոլոր փուլերում ՌԴ-ն իրացրել է միջազգային իրաւունքով սահմանուած ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման եւ հակամարտութիւնների խաղաղ կարգաւորման սկզբունքի օգտին ունեցած գործելակերպը: Ատրպէյճանա-դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործընթացում ՌԴ-ն հանդէս է գալիս թէ՛ ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահութեան ձեւաչափում եւ թէ՛ առանձին դերակատարութեամբ», - գրած է Արցախի նախագահը՝ շեշտելով, որ բարձր կը գնահատեն Ռուսաստանի միջնորդական ջանքերը, աշխոյժ դերակատարութիւնը եւ որոշիչ առաքելութիւնը հակամարտութեան կարգաւորման բոլոր փուլերուն:

«Բարձր ենք գնահատում ՌԴ եւ անձամբ ձեր դիւանագիտական գործուն ջանքերն՝ ուղղուած Ատրպէյճանի կողմից Արցախի դէմ սանձազերծուած յարձակման եւ լայնածաւալ պատերազմը կանգնեցնելուն: Ուզում եմ նաեւ ձեզ տեղեկացնել, որ Արցախի Հանրապետութիւնում եւ ողջ հայութեան շրջանում մեծ արձագանգ են ստացել «Վալտայ» ակումբում ձեր ելոյթում հնչած առարկայական գնահատականները ստեղծուած իրավիճակի մասին:

Դուք այն անհատականութիւնը եւ պետութեան ղեկավարն էք, ով ունի հսկայական հեղինակութիւն աշխարհում եւ մեր տարածաշրջանում: Հաշուի առնելով այդ ամէնը, խնդրում ենք ձեզ գործադրել բոլոր հնարաւոր ջանքերն ատրպէյճանադարաբաղեան հակամարտութեան գոտում պատերազմի դադարեցման եւ քաղաքական գործընթացների վերսկսման ուղղութեամբ»:

«Ամերիկեան Զինադարարը» Եւ Փուլ Եկաւ

Արցախի Պաշտպանութեան Բանակը Ունի Բաւարար Զէնք Եւ Կարողութիւն Իր Առջեւ Դրուած Խնդիրները Լուծելու Համար, Վստահեցուց Փաշինեան

Միացեալ Նահանգներու միջնորդութեամբ Երկուշաբթի, Հոկտեմբեր 26-ի առաւօտեան նախատեսուած զինադարարը եւս փուլ եկաւ, երբ ատրպէյճանական բանակը շարունակեց իր յարձակողական գործողութիւնները Արցախի Պաշտպանութեան Բանակի դիրքերը ուղղութեամբ, նաեւ հարուածներ հասցնելով խաղաղ բնակավայրերու վրայ:

Զինադարարի տապալումէն ետք վարչապետ Նիկոլ Փաշինեան ելոյթ ունենալով միջազգային հանրութեան ու յատկապէս Միացեալ Նահանգներու ուղադրութիւնը հրաւիրեց զինադարարի երրորդ փորձը եւս Ատրպէյճանի կողմէ տապալուելուն վրայ:

Փաշինեան նշեց, որ չենք գիտեր, թէ ԱՄՆ-ի նախագահը ինչպէս կ'արձագանգէ հրադարարի ձախողման, եւ տեղեկացուց, թէ կէսգիշերէն ետք հեռաձայնային գրոյց ունեցած է Պետական քարտուղար Մայք Փոմփէյդի հետ, որոնք լինելով ան ըսած է, որ մեծ հաւանականութեամբ հրադարարը պիտի չպահանջուի, ու մեծ հաւանականութեամբ Ատրպէյճանը պիտի ըսէ, որ Հայաստանն է մեղաւորը:

«Ճիշդ չեմ համարում ասել, թէ ինչ է պատասխանել պարոն Փոմփէյն: Յոյս ունեմ, որ ԱՄՆ պաշտօնական ներկայացուցիչը կը պատասխանի հարցին՝ արդեօք



Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ Դեկտեմբեր 27-ի երեկոյեան

իրենք պարզեցին, թէ ում գործողութիւնների արդիւնքում է խախտուել հրադարարը, եթէ պարզեցին, ապա ինչ հետեւանքներ է ունենալու դա խախտած կողմի համար», - ներկայացուց վարչապետը:

«Այս ողջ ընթացքում մենք եղել ենք առաւելագոյնս ճկուն, ինչի ընթացքում եկել ենք այն եզրակացութեան, որ Ատրպէյճանը հիմա առաւել եւս ոչ թէ շարաբաղի հարցի կարգաւորում է ուզում, այլ ուզում է շարաբաղի անձնատուութիւնը», - ըսաւ վարչապետը:

տը՝ աւելցնելով, որ հայ ժողովուրդը պատրաստ է նոյնիսկ «ցաւոտ փոխգիշումներու», սակայն ոչ անձնատուութեան որեւէ պարագայով: Հետեւաբար, ըստ անոր, հայ ժողովուրդը սեփական շահերը պաշտպանելու միջոցներ պէտք է գտնէ, որպէսզի Ատրպէյճանի պահանջը ըլլայ ոչ թէ շարաբաղի անձնատուութիւնը, այլ փոխգիշում:

Նիկոլ Փաշինեան կրկին պնդեց, որ Ատրպէյճանը պատ-

Շար.ը էջ 5

Թուրքիոյ Մէջ Հայերը Ատելութեան Խօսքի Եւ Սպառնալիքներու Թիրախ

Թուրքիոյ մէջ ատելութեան խօսքն ու հայերու նկատմամբ սպառնալիքները աշխուժացած են Արցախի եւ Հայաստանի դէմ Ատրպէյճանի սանձազերծած ռազմական գործողութիւններու ֆոնին:

Թուրքիոյ Ազգային Ժողովի հայ պատգամաւոր Կարօ Փայլան թրքական «Տուվարի»-ին տուած հարցազրոյցի ընթացքին ընդգծած է, որ Թուրքիոյ իշխող «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութիւնը երկրին մէջ ստեղծած է «ատելութեան սովորական մթնոլորտ»:

«Արմէնփրես»-ի հաղորդմամբ՝ լրատուամիջոցը նկատած է, որ Փայլան եւս թիրախաւորուած է Թուրքիոյ մէջ՝ հրադարարի կողմնակից ըլլալու եւ խաղաղութեան կոչ ընելուն համար:

Փայլան նշած է, որ Թուրքիոյ մէջ կ'ապրին տարբեր ինքնութիւններ, տարբեր հաւատք եւ համոզմունք ունեցող քաղաքացիներ: «Սակայն ներկայ վարչակարգը, ցաւօք, կը շարունակէ վարել իր ազգայնական եւ կրօնական ուղղուածութիւն ունեցող քաղաքականութիւնը», նշած է Փայլան:



Թուրքիոյ Ազգային Ժողովի հայ պատգամաւոր Կարօ Փայլան

Այն ժամանակ, երբ Թուրքիոյ կառավարութիւնը կանգնած է Ատրպէյճանի կողքին՝ Լեռնային Ղարաբաղի մէջ ընթացող պատերազմին, Թուրքիոյ մէջ հայերը յայտնուած են ատելութեան խօսքի եւ սպառնալիքներու թիրախին: «Այսպիսի մթնոլորտի մէջ, երբ Թուրքիան Ատրպէյճանի կողմն է, եւ երբ հայերուն դէմ ատելութեան խօսք կը կիրառուի, մենք աղաւնիի ան-

Շար.ը էջ 5

Հիմնադրամի Դրամահաւաքը Անցաւ 150 Միլիոն Տոլարը

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի «Մենք ենք մեր Սահմանները. Բոլորս Արցախի Համար» նշանաբանին տակ յայտարարուած դրամահաւաքը անցաւ 150 միլիոն տոլարը:

Սեպտեմբեր 27-ին, պատերազմի սկսելէն անմիջապէս ետք յայտարարուած հանգանակութեան յատուկ արշաւը կը շարունակուի նոյն թափով եւ հայութիւնը աշխարհի տարբեր կողմերէն անխտիր կը բերէ իր մասնակցութիւնը մեծ ու փոքր նուիրատուութիւններով:

Նախորդ տարիներուն նման, Նոյեմբեր 26-ին տեղի պիտի ունենայ Ամերիկայի Գոհաբանութեան Օրուայ առթիւ տարեկան թելեթոնը՝ շարունակելու համար Արցախի հերոս ժողովուրդին զօրակցութիւն յայտնելու եւ թիկունքը ամուր պահելու աշխատանքը:

Այս առթիւ յայտարարուեցաւ նոր՝ 50 PLUS արշաւը, ամսական դրութեամբ 50 տոլար նուիրաբերելու Համահայկական Հիմնադրամին:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

ՌԻԼՍԱՍՏԱՆԸ ԱՌԻՍՏՈՒՄ ԿԱՆԳՆԵԼ Է ՓԱՍՏԻ ԱՌԱՋ

ԱՐԱՄ ԱՄԱՏՈՒՆԻ

ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը յայտարարել է, որ Թուրքիային կոչ են անում գործադրել իր ազդեցութիւնը հրադադարի հարցում: Այդ յայտարարութիւնը գործնականում ուրիշ բան չէ, քան Թուրքիայի ազդեցութեան ճանաչում, որովհետեւ եթէ Անքարան պէտք է ազդեցութիւն գործադրի հրադադարի հարցում, ապա դրա դիմաց էլ բնականաբար պէտք է ակնկալի իր քաղաքական նպատակների որոշակի իրականացում: Իսկ այդ նպատակների շարքում, ինչպէս յայտնի է, առանցքայինը ձեւաչափ խցկուեցին է, որեւէ կերպ: Ընդ որում, խօսքը լոկ Մինսկի խմբի մասին չէ, քանի որ Անքարան չի թաքցրել, որ Մոսկուային առաջարկում է գործակցել՝ ինչպէս Սիրիայում: Պէտք է ընդունել նաեւ, որ Մոսկուան դէֆակտո համաձայնել է այդ գործակցմանը, պարզապէս առայժմ միայն ակնարկում է այդ մասին: Լավրովի յայտարարութիւնն ակնարկներից մէկն է:

Եղել են այդ ընթացքում էլի
այդօրինակ յայտարարութիւններ,
որոնք վկայում են, որ Մոսկովան
փաստացի ճանաչում է Թուրքիայի
ներկայութիւնն ու ազդեցութիւնը:
Եւ պէտք է արձանագրել նաեւ, որ
այդ ճանաչման հարցում խղիրը
միայն արցախեան պատերազմում
ուզածամականութային իրադրութիւ-
նից չէ, որ կախուած է: Կայ մի
իրողութիւն, որը կապուած է Ատր-
պէյճանում Թուրքիայի ռազմական
ներկայութեան հետ: Այդ ներկա-
յութիւնը լեգիտիմացւում է քայլ

առ քայլ: Ալիեւը հենց այսօր
յայտարարել է, որ Ատրպէյճանը
կ'օգտագործի թուրքական F-16
կործանիչները, եթէ ենթարկուի
ագրեսիայի: Ալիեւը նշել է, որ դա
թուրքական ռազմական աջակցու-
թիւն է: Այստեղ հարցը այն չէ, որ
այս յայտարարութիւնները ակն-
յայտօրէն միտուած են Ատրպէյճա-
նում թուրքիայի մշտական ռազ-
մական ներկայութիւնն ու տեղա-
կայուածութիւնը լեզիտիմացնելուն,
ընդհուպ ռազմականեանի աստի-
ճան: Սա իր հերթին նշանակում է,
որ թուրքիան ու Ատրպէյճանը
արդէն սկսել են հետեւողականօրէն
առաջ մղել այդ օրակարգը եւ
միջազգայնացնել այն:

Այսինքն՝ անկախ այն բանից, թէ ինչպիսին կը լինի ռազմաճակատային իրադրութիւնն ու յարաբերակցութիւնն Արցախի դէմ թուրք-հասակական պատերազմի արդիւնքում, Անքարան արդէն իսկ որպէս արդիւնք փորձում է ամրագրել իր ռազմական ներկայութիւնը Ատրպէյճանում: Իսկ դա իրողութիւն է, որ Ռուսաստանն այլեւս ի գորտ չէ հաշուի չառնել: Մոսկովան այլեւս չունի թուրք-իսլան Ատրպէյճանից հեռացնելու հնարաւորութիւն եւ հետեւաբար՝ թուրքերի հետ չպայմանաւորուելու տարբերակ:

Ինչ տարբերակներ ունի Հայաստանը՝ միջնաժամկետ եւ երկարաժամկետ հեռանկարի համար: Այդ խնդրի պատասխաններն ձեւաւորելը դառնում է հայկական պետականութեան ռազմաքաղաքական անվտանգ պիտանքն առաջնահերթութիւն:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Պատերազմում Յադթելու երեք Նախապայմանները

Պատերազմի թերեւս ամենածանր օրերն են, ընդ որում՝ բոլոր ճակատներում: Խոսքը միայն ռազմաճակատի տարբեր ուղղութիւնների մասին է: Բանն այն է, որ այսօր մենք ծանրագոյն պատերազմի մէջ ենք միաժամանակ երեք ճակատներով՝ առաջնագիծ, քորոնավարակի դէմ պայքար եւ դիւանագիտական պայքար: Ընդ որում՝ առաջին հայեացքից կարող է թուալ, թէ դրանք համարժէք չեն, եւ բուն պատերազմի համեմատ մնացած ամէն ինչը երկրորդական է: Կարճաժամկէտ կտրուածքով իսկապէս այդպէս էլ կայ: Բայց քանի որ այս պատերազմը կարող է շատ տեւական լինել ու նոյնիսկ աշխարհագրօրէն ընդլայնուել, «ազմաճակատի» միւս ուղղութիւնները, հաւատացէք, նոյնքան կարեւոր են:

Եւ այսպէս, ի՞նչ ունենք գու-
գահեռաբար ընթացող երեք պա-
տերազմներում: Ռազմական գոր-
ծողութիւնների առումով՝ մեր բա-
նակը փայլուն է գործում եւ
յամենայն դէպս կարողացել է ոչ
միայն տապալել թշնամու նախնա-
կան պլանները, այլեւ հապէս թու-
լացնել նրա հարուածային ուժը եւ
ստիպել անցնել դիրքային մար-
տերի: Քորոնավարակի դէմ պայ-
քարի առումով իրավիճակը, մեղմ
ասած, խաղառակ է. ռազմաճա-
կատի այդ հատուածում պարտում
ենք: Եւ սա՝ այն դէպքում, երբ այդ
պատերազմում կարող էինք յաղ-
թել առանց հերոսութեան ու մեծ
գոհողութիւնների: Պէտք էր ընդա-
մէնը պահպանել հակահամաճարա-
կային կանոնները: Բայց՝ չէ: Ինչ-
քան ուզում ես մարդկանց բացատ-

որի, որ դիմակ չկրող 50 քաղաքացիները մօտաւորապէս համարժէք են թշնամու մէկ ԱԹՄ-ի, որովհետեւ նրանք վարակելու են առնուազն մի քանի հարիւր հոգու, նրանցով ուզած-չուզած զբաղուելու են տասնեակից աւելի բժշկներ, իսկ այդ ընթացքում մեր վիրատուր գինտուրները, հնարաւոր է, բժիշկների պակասի պատճառով մահանան... Մի խօսքով՝ այս առումով մենք ձախողում ենք բանակի թիկունքն ամուր պահելու մեր բաժին խնդիրը: Մինչդեռ այստեղ նոյնպէս ռազմական կարգապահութիւն է պէտք՝ ինչպէս բանակում է իսկ բանակում հրամանները չեն քննարկում: Կատարում են՝ եթէ անգամ ներքուստ համաձայն չեն դրա հետ:

Հիմա՝ դիւանագիտական ապատերազմի մասին: Այստեղ նոյնպէս մեր հասարակութեան հիմնական խնդիրը պետութեանն ու բանակին օգնելն է, իսկ եթէ Հիստացու՝ գոնէ չխանգարելը: Բայց պարզու՞մ է՝ այս ասպարէզու՞մ նոյնպէս տնաբոյծ «մասնագէտների» պակաս չկայ: Նոյն ոգեւորութեամբ, որով «Բիլզեյցի չիպաւորման» կամ «Իսկանդերներով թուրքերի հերն անիծելու» մասին են խօսում, Հիմա էլ մարզադարի հաստատման կամ ուռնաստանցի խաղաղապահների ներկայութեան դէմ են բոցաշունչ ելլոյթներ ունենում (բնականաբար՝ սոցիալքերում, յաղթողական կեցուածքով կապուչիոյի բաժակը

Շար.ը էջ 19

Պետութիւնը ժամանակը Տուել է Վերադասաւորուելու՝ Համար
Ոչ Թէ Թուրքական Ապրանքների Նոր Խմբաքանակներ
Ներմուծելու

ԱՐՄԵՆՈՒՅԻ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Թուրքական ծագման ապրանքների ներմուծումը Դեկտեմբերի 31-ից 6 ամիս ժամկէտով արգելուած է: Երբ հարց հնչեց, թէ ինչու է այդ արգելքը Դեկտեմբերի 31-ից եւ ոչ հենց այսօր, պետական գերատեսչութիւններից պատասխանը հետեւեալը եղաւ՝ որպէսզի տնտեսավարողները 2 ամիս ժամանակ ունենան փոփոխութիւններին յարմարուելու համար: Այսինքն՝ նոր շուկաներ գտնելու, վերադասաւորուելու համար, այլ ոչ թէ թուրքական ապրանքների նոր խմբաքանակներ ներմուծելու:

Իսկ որ ալլոպիսի դէպքեր կը լինեն, հաստատ է, որովհետեւ երէկ մի առեւտրականի հետ պատահաբար զրոյցի ենք բռնուել եւ իմացել, որ ալլոպիսիք էլի կան՝ պատճառաբանելով, թէ 2 ամիս ժամանակ ունեն, եւ յարմար է, որովհետեւ «նիսիա» էլ են առետուր անում թուրքիայի հետ:

Այսինքն՝ ի՞նչ է ստացւում, պետութիւնն աջակցում է, ժամանակ է տալիս, նոյնիսկ կոչ է անում, որ արդէն ներկրուած՝ թուրքական ծագման ապրանքը չբոյկոտի հանրութիւնը, որպէսզի այդ առեւտրականները չանանկանան, կարողանան վարկալին պարտաւորութիւնները մարել, իսկ այդ նոյն առեւտրականները ժամանակն օգ-

**տագործում են նոր ներկրումների
համար:**

Սա որպէս ահազանգ ենք
հնչեցնում, որովհետեւ պետութեան
անվտանգային հարցն այս պահին
կարեւոր է այս համապատկերում
տնտեսական հարցից: Եւ անկեղծ
ասած՝ ապշած ենք նոր ներկրում-
ներ անող այդ առեւտրականների
պահուածքից. ինքնապահպանման
տարրական բնազդը չի՞ գործում,
նոյնիսկ վերլուծութեան բացակա-
յութեան պայմաններում գլխնե-
րում հարց չի՞ ծագում, որ թուր-
քին տուած այդ գումարն իրենց էլ
է վնասում, վստա՞հ են, որ հենց
իրենց հարազատը, որդին, եղբայ-
րը, հայրը չեն ընկնի թուրքի
ձեռքից:

Ի դեպ, տարիներ շարունակ
Թուրքի հետ առևտրի ահազանգ
«ՀՀ»-ն հնչեցրել է: Եւ, ցաւօք,
նաեւ պետական այրերը պատաս-
խանել են, թէ՛ մեր տուած գումա-
րը ոչինչ է Թուրքական գանձարա-
նում: Հիմա տեսա՞ն, որ այդ ոչինչը
200 մլն տոլարից աւելի է...

ինչևհեհ, հիմա պետութիւնը
որոշել է եւ արգելել թուրքական
ծազման ապրանքների ներկրումը:
Եւ այստեղ շատ կարեւոր մի փաստ
կայ, արգելում է ոչ թէ պարզապէս
թուրքիայից ներկրուածը, այլ
թուրքական ծազմանը: Այսինքն՝
չեն կարող թուրքական ծազման
ապրանքը տանել Ռուսաստան եւ

այնտեղից բերել Հայաստան: Սա
չափ կարեւոր փաստ է:

Փորձենք հարցը նաև տեսնական հարթութիւնում դիտարկել, որպէսզի մեզ չմեղադրեն միայն քաղաքական որոշմանն աջակցելու մէջ:

«Ինտերֆաքս» լրագրողը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանին հարցրել էր, թէ ինչքա՞ն բացասական ազդեցութիւն կ'ունենայ թուրքական ծագման ապրանքների ներկրման արգելքը հայկական տնտեսութեան վրայ, վարչապետը պատասխանել է. «Մենք յոյս ունենք, որ դրական ազդեցութիւն կ'ունենայ: Դա շատ կարեւոր քաղաքական որոշում է: Մեր տնտեսութիւնը պէտք է արձագանքի թուրքիայի ապակառուցողական քաղաքականութեանը»:

Տնտեսութիւնը պէտք է արձագանքի: Արձագանքն էլ հետեւեալն է. ինչպէս էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վարոս Սիմոնեանն է ասում, կառավարութիւնը եւ էկոնոմիկայի նախարարութիւնն ամբողջ գործիքակազմով կը սատարեն տնտեսավարողներին վերադասաւորուելու եւ գտնել նոր շուկաներ: Այսինքն՝ տնտեսավարողին չի աւտում՝ գործը փակի՝ տողի նստի: Նորա առաջարկում են այլ շուկաներում վերադասա-

Շաբ.ը էջ 19

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐՈՒ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐՈՒ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆԱՎԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

LՈՒՐԵՐ

Ատրպէյճանը Նպատակ Չունի Խաղաղ Երկխօսութիւնը Վերսկսելու, Կը Շեշտէ Արայիկ Յարութիւնեան

Հակառակ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահող երկիրներու գործադրած ջանքերուն, ուղղուած տարածաշրջանի մէջ մարդասիրական հրադադար հաստատելուն, Ատրպէյճանի ռազմաքաղաքական ղեկավարութիւնը կը շարունակէ անտեսել եւ խախտել այդ նպատակով ձեռք բերուած բոլոր պայմանաւորուածութիւնները, կը յայտարարէ Արցախի նախագահ՝ Արայիկ Յարութիւնեան:

« Ինչպէս եւ նախորդ անգամները, Ամերիկայի Միացեալ Նահանգների միջնորդութեամբ եւ ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահների մասնակցութեամբ ձեռք բերուած պայմանաւորուածութիւնը, որը վերահաստատում էր Մոսկուայում Հոկտեմբեր 10-ին եւ Փարիզում Հոկտեմբեր 17-ին Ռուսաստանի Դաշնութեան եւ Ֆրանսայի Հանրապետութեան նախագահների նախաձեռնութեամբ համաձայնեցուած մարդասիրական հրադադարը կեանքի կոչելու եւ պահպանելու կողմերի յանձնառութիւնը, այսօր կրկին կոպտօրէն խախտուել է պաշտօնական Պաքուի կողմից: Յատկապէս օրուայ երկրորդ կէսին Ատրպէյճանն առաջնագծի ողջ երկայնքով վերսկսել է նախադրձակ գործողութիւնները՝ հրթիռահրետանային միջոցների կիրառմամբ», - գրած է Յարութիւնեան իր դիմատետրի էջին վրայ:

Ըստ նախագահին՝ այս ամէնը կը հաստատէ, որ Ատրպէյճանի իշխանութիւնները, ունենալով թուրքիոյ իշխանութիւններու անվերապահ հովանաւորութիւնը եւ վարձկան-ահաբեկիչներու աջակ-



Արցախի նախագահ՝ Արայիկ Յարութիւնեան

ցութիւնը, որեւէ նպատակ չունին խաղաղ երկխօսութիւնը վերսկսելու եւ բացառապէս կերպով հասկնելու տան, որ պիտի շարունակեն ռազմական ջանքերը Արցախի վերջնական հայաթափման ուղղութեամբ:

« Ուստի, մեր համազգային խնդիրն է պայքարել յանուն սեփական հայրենիքում արցախահայութեան անվտանգ ու արժանապատիւ գոյութեան: Մեր ժողովրդի անվտանգութիւնն ու իրաւունքները որեւէ զիջման ենթակաջ չեն, եւ այդ հարցում մեր վճռականութիւնը վեր է բոլոր տեսակի հանգամանքներից ու ցանկութիւններից», - աւելցուցած է Յարութիւնեան:

Յիշեցնենք, որ ատրպէյճանական կողմը իր հերթին կը յայտարարէ, որ հայկական կողմը խախտած է երրորդ հրադադարի ռեժիմը:

Ծառուկեանը 100 Միլիոն Դրամ Գրաւի Դիմաց Ազատ Արձակուեցաւ

Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարանի դատաւոր Մնացական Մարտիրոսեան բաւարարեց « Բարգաւաճ Հայաստան » խմբակցութեան ղեկավար՝ Գագիկ Ծառուկեանի պաշտպաններու միջնորդութիւնը՝ զինք գրաւի դիմաց ազատ արձակելու մասին:

Գագիկ Ծառուկեան ազատ կ'արձակուի 100 միլիոն դրամ գրաւի դիմաց:

Լրագրողներու հետ զրոյցին, ԲՀԿ առաջնորդի փաստաբաններէն Սամուէլ Տիկպանտեան որոշումը « արդարացի » որակեց՝ նշելով. « Առաջին ատեանի դատարան դիմելու հիմքը քրէական դատավարութեան օրէնսդրութեամբ նախատեսուած նոր հանգամանքներ ի յայտ գալու հանգամանքն է: Դա մեր երկրի ռազմական դրութիւնն է, այն վիճակն է, որ մենք այսօր կանք, գոյութիւն ունենք, ու դատարանը գնահատելով մեր միջնորդութեան մէջ բերուած բոլոր իրաւական եւ փաստական հանգամանքները կայացրեց արդարացի որոշում »:

Նշենք, որ Ծառուկեան կալանաւորուած է Սեպտեմբեր 25-էն:

ԲՀԿ-ի առաջնորդը կալանաւորելու համար Ազգային անվտանգութեան ծառայութիւնը միջնոր-



« Բարգաւաճ Հայաստան » խմբակցութեան ղեկավար՝ Գագիկ Ծառուկեան

դած էր Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարան, սակայն այդ միջնորդութիւնը մերժուած էր:

Ծառուկեան կը մեղադրուի 2017-ի խորհրդարանական ընտրութիւններու ժամանակ ընտրակաշռք տալ կազմակերպելու մէջ, սակայն մեղադրանքը չի ընդունիր: Ծառուկեան կը համարէ, որ ինք քաղաքական հետապնդման կ'ենթարկուի Կառավարութեան հրաժարականը պահանջելուն համար:

Ծալալ Յարութիւնեանի Վիրաւորուելէն Ետք Նշանակուեցաւ Արցախի Պաշտպանութեան Նոր Նախարար



Ծալալ Յարութիւնեան

Արցախի նախագահ՝ Արայիկ Յարութիւնեանի հրամանագիրով զօրավար-լեյտենանտ՝ Ճալալ Յարութիւնեան ազատուած է Պաշտպանութեան բանակի (ՊԲ) հրամանատարի պաշտօնէն: Հաղորդուած է նաեւ, որ Ճալալ Յարութիւնեան վիրաւոր է, եւ անոր պաշտօնանկութիւնը այդ հանգամանքով պայմանաւորուած է: Զինք կը փոխարինէ Միքայէլ Արզումանեան, որուն այսօր շնորհուած է զօրավար-լեյտենանտի զինուորական կոչում:

Արցախի նախագահը Հոկտեմբեր 27-ին, մասնաւորապէս, իր դիմատետրի էջին գրած է. - « Զալալ Յարութիւնեանի ազատման որոշումը պահի հրամայական է՝ պայմանաւորուած օրերս մարտական դիրքում նրա ստացած վիրաւորումով եւ տարամեկնաբանութիւնների առիթ չպէտք է հանդիսանայ: Ապաքինում եմ մաղթում Զալալ Անատոլիին եւ համոզուած եմ, որ նա շատ շուտով կը վերադառնայ հայրենիքին ծառայութեան »:

Հայկական կողմը պաշտօնապէս հաստատեց, որ արդէն երրորդ անգամ տապալուած հրադադարի նախորդող զիշերը՝ այսինքն՝ Հոկտեմբեր 25-ի մարտերու ընթացքին, ատրպէյճանական ուժերը յաջողած են գրաւել Քուպաթլուն եւ որոշ ուղղութիւններով առաջանալ: Արդեօք ինը ամիս պաշտօնավարած Ճալալ Յարութիւնեանի պաշտօնանկութիւնը որեւէ կերպ պայմանաւորուած է տարածքային կորուստներով, Արցախի նախագահի խօսնակը չցանկացաւ պատասխանել այս հարցին, միայն վերահաստատեց, որ Յարութիւն-



Միքայէլ Արզումանեան

եան Պաշտպանութեան բանակի հրամանատարի աշխատանքէն ազատուած է առողջական խնդիրներու պատճառով. - « Ես կարծում եմ, որ պէտք է բաւարարուել այնքանով, ինչքանով պարոն նախագահն այդ առթիւ մեկնաբանութիւն է տուել եւ ինչպէս որ իր գրառման մէջ է նշել, որ տարամեկնաբանութիւններ պէտք չեն, ուրեմն չեմ կարծում, որ իմաստ կայ նոր ինչ որ այլ բաներ փնտռել կամ կարծիքներ յայտնել: Ի վերջոյ որոշողը հանրապետութեան նախագահն է: Հաշուի առնելով ժամանակահատուածի կարեւորութիւնն ու այս ծանր պատասխանատուութիւնը՝ պարոն նախագահը արագ որոշում է կայացրել՝ պաշտպանութեան նոր նախարար նշանակելով Միքայէլ Արզումանեանին »:

Վահրամ Պօղոսեան նաեւ հաղորդեց, որ Ճալալ Յարութիւնեանի կեանքին վտանգ չի սպառնար, վիրաւորումը ծանր չէ, եւ զօրավար-լեյտենանտը ապաքինումէն յետոյ կրկին կը վերադառնայ Պաշտպանութեան բանակի շարքերը, կատարելով իրեն վերապահուած ծառայողական նոր պարտականութիւնները. - « Զալալ Յարութիւնեան իրեն բաւականին լաւ է զգում: Ապաքինման գործողութիւնը ընթանում է շատ խիստ կերպով, եւ առաջիկայում նա կրկին վերադառնալու է Պաշտպանութեան բանակի շարքեր եւ կատարելու է արդէն իրեն վերապահուած նոր ծառայողական պարտականութիւնները »: Հարցին, թէ որոնք կ'ըլլան նոր ծառայողական պարտականութիւնները, Պօղոսեան պատասխանեց՝ ռազմական զադտնիք է:

ՊՆ-ի Հաղորդմամբ՝ Հրետակոծուած ԵՆ ՀՀ-Իրան Սահմանի Դիրքերը, Կան Վիրաւորներ

Հարաբաղեան հակամարտութեան գօտիին վրայ վերսկսուած ռազմական գործողութիւններու 31-րդ օրը, Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը (ՊՆ) հաղորդեց, որ ատրպէյճանական կողմը, խախտելով հրադադարի ռեժիմը, անօդաչուներով եւ հրթիռահրետանային միջոցներով հրետակոծած է իրանի հետ Հայաստանի հարաւային սահմանի հատման կէտի հայկական սահմանապահ ուղեկալի դիրքերը: Անօդաչու թռչող սարքերէն (ԱԹՍ) մէկը ինկած է Հայաստանի տարածք:


Նախարար՝ Դաւիթ Տօնոյեան, այսօր՝ Հոկտեմբեր 27-ին հանդիպելով հրամանատարական կազմին հետ, քննարկած է հարաւային սահմանին առկայ օփերաթիւ իրա-

վիճակն ու առաջիկայ քայլերը: « Անմիջապէս մեր կողմից հաստատուեց, բոլոր շարժերը մեր կողմից հաստատուած են, չունենք անձնակազմի կորուստներ, չունենք մարդկային ոչ մի կորուստ եւ գրահամեքենայի կորուստներ: Իրան-վիճակն ընդհանուր առմամբ շփման գծում մեր կողմից վերահսկելի է », - զեկուցուած է նախարարին:

Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան խօսնակ՝ Շուշան Ստեփանեանի հաղորդմամբ՝ հայկական կողմը վիրաւորներ ունի: Ստեփանեան դիմատետրի էջին գրած է, որ Հայաստանի հարաւային ուղղութեամբ ատրպէյճանական ունձ-գութիւնները կանխելու նպատակով սահմանապահ ուժերը դիմած են կանխարգելիչ գործողութիւններու:

ԼՈՒՐԵՐ

Ալիեւ Ռաստատած է Թրքական F-16 Ռազմական Օդանաւերու Առկայութիւնը Ատրաքեյճանի Մէջ



Արբանեակային նկարները ցոյց կու տան թրքական F-16 ռազմական օդանաւեր Ատրաքեյճանի մէջ

Հոկտեմբեր 26-ի տեսաուղերձով Ատրաքեյճանի նախագահ՝ Իլհամ Ալիեւ հաստատած է, որ իր երկրին մէջ թրքական F-16 ռազմական օդանաւեր կան: Ան ըսած է, թէ արբանեակէն կարելի է տեսնել եւ համոզուիլ, որ անոնք կը գտնուին գետնի վրայ, այլ ոչ թէ երկինքը: «Անոնք եկած են զօրավար-ժութիւններուն մասնակցելու նպատակով եւ մնացած այստեղ, երբ սկսաւ պատերազմը: Մեր թուրք եղբայրները ատոնք թողած են բարոյապէս մեզի աջակցելու համար», - ըսած է Ալիեւ եւ սպառնացած. - «Բայց եթէ դուրսէն մեր դէմ յարձակում ըլլայ, անոնք կը տեսնեն այդ F-16-ները»:

Ատրաքեյճանի նախագահ՝ Իլհամ Ալիեւ այսօր, տեսաուղերձով դիմելով իր ժողովուրդին, ըսած է, թէ զարաբաղեան հակամարտու-

թիւնը պէտք է կարգաւորուի կ'մ քաղաքական եւ կ'մ ռազմական ճանապարհով:

«Ես կ'առաջարկեմ, եթէ կը ցանկաք, որ հակամարտութիւնը խաղաղ ճանապարհով կարգաւորուի, ուրեմն մենք կը դադրեցնենք մարտական գործողութիւնները: Բայց մեզի պէտք է անյապաղ ըսուի, որ Հայաստանը դուրս պիտի ելլէ մեր հողերէն: Մեզի պէտք է գրաֆիկ ժամանակացոյց ներկայացուի, քանի օրէն անոնք դուրս պիտի ելլեն այս շրջանէն, քանի օրէն միւս շրջանէն: Հայաստանը այդ գրաֆիկը ժամանակացոյցը մեզի չէ ներկայացուցած: Այդ պարագային, եթէ հրադադարը շարունակուի, իսկ հարցը սառեցուած մնայ, ուրեմն այդ մեզի համար ձեռնտու չէ», - յայտարարած է Իլհամ Ալիեւ:

Էրտողանի Պնդմամբ՝ Անգարան Եւ Մոսկուան Նոյն Իրաւունքները Ունին Ղարաբաղի Կարգաւորման Հարցով

Թուրքիոյ նախագահ՝ Ռէճեպ Թայյպ Էրտողան Հոկտեմբեր 23-ին Պոլսոյ մէջ յայտարարած է, որ Անգարան եւ Մոսկուան զարաբաղեան խնդրով ունին նոյն իրաւունքները:

«Թուրքիան ունի զարաբաղեան խաղաղ կարգաւորման մասնակցելու այնպիսի իրաւունք, ինչպիսին ունի Ռուսաստանը: Գիտէք, որ Թուրքիան ԵԱՀԿ Մինսքի խումբի անդամ է, սակայն եռանախագահութիւնը, ցաւօք, մինչ օրս արդիւնքի չէ հասած: Ատրաքեյճան իրաւացի պահանջ կը դնէ՝ ըսելով, եթէ Հայաստանը Ռուսաստանին կ'առաջարկէ, ուրեմն մենք ալ Թուրքիոյ առաջ կը քաշենք: Ատրաքեյճանը կը պնդէ, որ սահմանային անվտանգութեան եւ խաղաղութեան հասնելու բանակցութիւններուն Թուրքիան եւ Ռուսաստանը միասին գործեն», - Պոլսոյ ուրբաթօրեայ աղօթքէն յետոյ ըսած է Էրտողան:

Միեւնոյն ժամանակ, ան նշած է, որ «Ռուսաստան հակամարտութեան կարգաւորման Թուրքիոյ մասնակցութեան վերաբերեալ ոչ



Թուրքիոյ նախագահ՝ Ռէճեպ Թայյպ Էրտողան

մէկ պահանջ կը ներկայացնէ»:

«Այս մասով Ռուսաստանէն բացասական կարծիք չէ հնչած: Մինչ այժմ Սուրիոյ եւ Լիպիոյ հարցով միասին աշխատած ենք, մեր ցանկութիւնն է նոյն կերպ յաջողութեամբ աշխատիլ նաեւ Ատրաքեյճանի եւ Հայաստանի միջեւ խնդրի լուծման ուղղութեամբ», - նշած է Թուրքիոյ նախագահը:

Լեռնային Ղարաբաղի Շուրջ Իրենց Սօտեցումները Թուրքիոյ Հետ Չեն Համընկնիր, Ըսած է Փութին

Արցախի մէջ ընթացող մարտական գործողութիւններուն անդրադարձած է Ռուսաստանի նախագահ՝ Վլատիմիր Փութինը: Ան նշած է, որ թէ՛ ատրաքեյճանական եւ թէ՛ հայկական կողմերէն մեծաթիւ զոհեր կան:

«Մեր տուեալներով իւրաքանչիւր կողմէ 2 հազարէն աւելի զոհ կայ, զոհերու ընդհանուր թիւը կը մօտենայ 5 հազարին: Աֆղանիստանի պատերազմի 10 տարիներու ընթացքին, խորհրդային բանակէն զոհուած է 13 հազար մարդ, իսկ այստեղ այս կարճ ժամանակամիջոցին՝ մօտ 5 հազար», - ըսած է Փութին:

Խօսելով «Վայտա» քննարկումներու ակումբի ուղիղ եթերով՝ Փութին նաեւ նշած է, որ շատ կը ցանկայ որեւէ փոխդիմում գտնել, եւ որ ամէն օր քանի մը անգամ կը խօսի Հայաստանի ու Ատրաքեյճանի ղեկավարներուն հետ: Ռուսաստանի նախագահը նաեւ յոյս յայտնած է, որ ԱՄՆ-ը կ'աջակցի զարաբաղեան հակամարտութեան կարգաւորման հարցով:

Փութին նաեւ նշած է, որ Լեռնային Ղարաբաղի իրավիճակի շուրջ իրենց մօտեցումները Թուրքիոյ հետ չեն համընկնիր: Ռուսաստանի նախագահը նաեւ ընդգծած է, եթէ 30 տարուայ բանակցութիւնները Լեռնային Ղարաբաղի շուրջ յաջողութիւն չեն արձանագրած, այդ չի նշանակեր, որ պէտք է սկսիլ կրակել: Փութինը նաեւ նշած է, որ նախապէս, զարաբաղեան հակամարտութիւնը մեկնարկուած է հայ ժողովուրդի դէմ տեղի ունեցած դաժան յանցագործութիւններով:

«Փաստ է, որ նախ Սումկայիթի, ապա Ղարաբաղի հայերուն դէմ դաժան յանցագործութիւններ տեղի ունեցած են», - ըսած է Ռուսաստանի նախագահը:

Միւս կողմէ Փութինի խօսնակը Տիմիթրի Փեսքով յայտարարեց, որ, Ղարաբաղի մէջ խաղաղ լուծումէն բացի, այլ լուծում չի կրնար ըլլալ:



Ռուսաստանի նախագահ՝ Վլատիմիր Փութին

Պաշտօնական Մոսկուան կը համարէ, որ զարաբաղեան ճգնաժամի կարգաւորման գործընթացը պէտք չէ եւ չի կրնար ըլլալ ռուսամերիկեան քաղաքական մրցակցութեան հարթակ: Այս մասին այսօր՝ Հոկտեմբեր 26-ին յայտարարած է Ռուսաստանի նախագահի մամուլի քարտուղարը: Տիմիթրի Փեսքով աւելցուցած է, որ Ղարաբաղի մէջ խաղաղ լուծումէն բացի, այլ լուծում չի կրնար ըլլալ:

«Այսօր ուշադրութեամբ կը հետեւինք իրավիճակին եւ նախկինին պէս համոզուած ենք, որ հնարաւոր է միայն խնդրի քաղաքական խաղաղ կարգաւորում», - ըսած է Փութինի խօսնակը:

Մոսկուան դէմ է Լեռնային Ղարաբաղի ռազմական լուծման եւ կոչ կ'ընէ բոլոր արտաքին խաղացողներուն ձեռնպահ մնալու ռազմական սենարներէն: Այս մասին յայտարարած է Ռուսաստանի արտաքին գործոց նախարարը Ալեքսեյ Լոմոզովը եւ Մակեդոնիոյ լուրերու գործակալութեան տուած հարցազրոյցի ընթացքին Յունաստան կատարելիք այցի նախօրէին. - «Չենք թաքցնել, որ չենք պաշտպանել այդ խնդրի ռազմական լուծման հնարաւորութեան եւ թոյլատրելիութեան մասին դիրքորոշումը:

Իրանը ԼՂ Հակամարտութեան Տեւական Կարգաւորման Նախագիծ Մշակած Է. Զարիֆ

Իրանի արտաքին գործոց նախարար՝ Մուհամետ Ժաւատ Զարիֆ խորհրդարանի ազգային անվտանգութեան եւ արտաքին քաղաքականութեան յանձնաժողովէն ներս մասնակցած է Լեռնային Ղարաբաղի շուրջ զարգացումներուն նուիրուած քննարկման:

Ինչպէս կը հաղորդէ «Արմէնփրես»-ը, վկայակոչելով IRNA գործակալութիւնը, նիստի ընթացքին Զարիֆ յայտարարած է. «Հիմա փոխ արտաքին գործոց նախարարը Արեւելեան Ատրպատական է, կ'այցելէ Խուտաֆերինի ջրամբար, որմէ յետոյ Պաքու, Մոսկուա եւ Երեւան պիտի մեկնի: Իրանը ԼՂ հակամարտութեան տեւական կարգաւորման համար նախագիծ մշակած է, որ այսօր-վաղը կը ներկայացուի, եւ յետոյ Մոսկուայի եւ Երեւանի մէջ նաեւ հետամուտ կ'ըլլանք»:

Զարիֆ աւելցուցած է, որ իրենց կ'անհանգստացնէ տարածաշրջանին մէջ թաքփիրի ահաբեկիչներու եւ նաեւ այլ ահա-



Իրանի արտաքին գործոց նախարար՝ Մուհամետ Ժաւատ Զարիֆ

բեկիչներու ներկայութիւնը: «Այս առնչութեամբ մենք յստակ ըսած ենք, որ այդ Իրանի իսլամական Հանրապետութեան համար անընդունելի է», - ըսած է Զարիֆ:

ԱՄՆ-ի Գոնկրետին Մէջ Արցախի Անկախութիւնը Ճանչնալու Բանաձեւ



Միացեալ Նահանգներու Գոնկրետի մէջ առաջին անգամ շրջանառութեան մէջ դրուած է Արցախի անկախութիւնը ճանաչելու մասին բանաձեւ: Նախօրէին նման նախաձեռնութեամբ հանդէս եկած է հայաշատ Քալիֆորնիոյ ընտրուած գոնկրէսական Կրէյս Նափոլիթանօն:

«Արցախը կարծես ամերիկեան պատմութիւն է՝ ազատ ժողովուրդի յաղթանակը օտար կառավարման դէմ: Այդ հպարտ Հանրապետութեան քաղաքացիները կը մարմնաւորեն մեր իսկ Անկախութեան հռչակագրի բառերը», - կը գրէ գոնկրէսական Ներկայացուցիչներու Տան խօսնակ՝ Նենսի Փելոսիին հասցէագրած նամակին մէջ:

«Յառաջ երթալու ճանապարհը ազատութեան ճանապարհն է, այդ է պատճառը, որ ես Միացեալ Նահանգներու կողմէ Արցախի անկախութեան պաշտօնական ճանաչման կոչ կ'ընեմ: Ազատութիւնը Արցախի գոյատեւման համար մնացած միակ պատասխանն է՝ պատմականօրէն հիմնաւորուած, օրէնքի վրայ հիմնուած անջատումը որպէս ապաքինում», - պնդած է Ներկայացուցիչներու պալատի անդամը՝ եզրափակելով. - «Յետդարձի ճանապարհ չկայ: Արցախը պէտք է վերադառնալ Ատրպէյճանին»:

Գոնկրէսական Կրէյս Նափոլիթանոն Միացեալ Նահանգներու օրէնսդիր մարմին մէջ առաջին անգամ ընտրուած է 1998 թուականին եւ վերընտրուած է տասը անգամ: Անցեալ տարիներուն Ամերիկահայ կազմակերպութիւններու կողմէ կատարուած հարցումներուն համաձայն՝ անոր օրէնսդրական գործունէութիւնը, մասնաւորապէս՝ ամերիկահայերու հարցերու շուրջ դիրքորոշումները, ծագումով հայ ընտրողները գերազանց գնահատած են:

Լեռնային Ղարաբաղի ճանաչման հարցով Կրէյս Նափոլիթանոյի նախաձեռնութիւնը կը յաջորդէ ԱՄՆ-ի Գոնկրետի մէկ այլ՝ առաւել ազդեցիկ ներկայացուցչի՝ Ատամ Շիֆի յայտարարութեան՝ «Եթէ Ատրպէյճանն ու Թուրքիան հետաքրքրուած չեն Արցախի հարցի

շուրջ բանակցութիւններով, ժամանակն է, որ ԱՄՆ-ը ճանչնայ Լեռնային Ղարաբաղը որպէս անկախ պետութիւն»:

Վերջին օրերուն, խումբ մը գոնկրէսականներ՝ Շիֆի գլխաւորութեամբ, նամակով դիմած էին ԱՄՆ-ի պետական քարտուղար՝ Մայք Փոմփէյին՝ յորդորելով վճռական քայլեր ձեռնարկելու եւ դատապարտելու Ատրպէյճանի սադրիչ յարձակումը ու Լեռնային Ղարաբաղի դէմ յարձակման մէջ Թուրքիոյ կործանարար դերակատարումը:

Ծերակուտական էտուարտ Մարքին դիմած է ամերիկեան դիւանագիտական գերատեսչութեան ղեկավարին՝ յորդորելով հասնելու Լեռնային Ղարաբաղի մէջ կրակի դադրեցման եւ խաղաղ կարգաւորման բանակցութիւններու միջոցով:

«Թուրքիոյ լիակատար աջակցութեամբ Ատրպէյճանի յարձակման գործողութիւնները Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի դէմ պէտք է անյապաղ դադրեցուին: Պետական քարտուղար Փոմփէյն պէտք է յստակացնէ, որ Միացեալ Նահանգները կ'աջակցի այս հակամարտութեան խաղաղ կարգաւորման եւ պատրաստ է նպաստել բանակցութիւններուն», - յայտարարած է Մասաչուսեցէն ընտրուած Ծերակուտականը՝ համոզմունք յայտնելով, որ խնդիրը Ատրպէյճանի կողմէն ռազմական ուժով լուծելու փորձերը «միջազգային հանրութեան ալլընտրանք չեն թողներ, քան անցնիլ Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչման՝ կառուցողական բանակցութիւններու բացակայութեան պայմաններուն տակ»:

Ծերակուտական Մարքի պնդմամբ՝ պետական քարտուղար՝ Փոմփէյն եւ նախագահ՝ Թրամփը «սերտ կապեր հաստատած են Թուրքիոյ նախագահ՝ Էրտողանի հետ» եւ «պէտք է իրենց մենատիրական ընկերոջը հասկցնեն, որ այս հակամարտութեան մէջ անոր հետազոյ մասնակցութեան գինը կ'ըլլայ ԱՄՆ-ի վարչակազմի հետ ջերմ յարաբերութիւններու եւ ռազմական օգնութեան դադրեցումը»:

առաջ գրուած վերջին յօդուածի խորհրդանշական հատուածը:

Փայլանը նկատել տուած է, որ պատերազմի հետեւանքով կը տուժեն եւ կը տառապին խաղաղ բնակիչներ, եւ որ ան հարցի լուծումը կը տեսնէ խաղաղութեան սեղանին:

«Ամերիկեան Զինադադարը» Եւս Փուլ Եկաւ

Շարունակուած էջ 1-էն

րաստ չէ եղած եւ հիմա ալ ռազմական այս իրավիճակի ֆոնին պատրաստ չէ փոխգիշումներու:

Ըստ վարչապետին՝ իւրաքանչիւր հայ այս պարագային պէտք է հասկնայ, որ պահը օրհասական է, եւ դարաբաղեան հարցի կարգաւորումը իրմէ կախուած է: «Զինուորական կոմիսարիաների առաջ պէտք է հերթեր լինեն 24 ժամ, այսօր մեր ժողովրդի ճակատագիրն է որոշում, եւ չկայ ճակատագրի լուծման աւելի լաւ տարբերակ, քան սեփական ձեռքերում դա վերցնելն է: Որպէս ՀՀ Զինուած Ուժերի գերագոյն գլխաւոր հրամանատար պահանջում եմ, որ ՀՀ իւրաքանչիւր քաղաքացի ենթարկուի իմ կոչին, իմ որոշմանը, հրամանին. ամէն տղամարդ պէտք է հենց հիմա ոտքի կանգնի ու գնայ իր զինուորական կոմիսարիա, սա իմ հրամանն է», - ընդգծեց վարչապետը:

Երեքշաբթի օր, Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մայք Փոմփէյօ դարձեալ խօսած է Փաշինեանի եւ Ալիեւի հետ՝ կոչ ընելով յարգելու Ուաշինկթընի մէջ կնքուած զինադադարի համաձայնութիւնը: Նախագահ Տանուտ Թրամփ իր կարգի յուսախաբուցութիւնը յայտնեց զինադադար չյարգելու կապակցութեամբ:

Արցախը Թէկուզ Վիրաւոր, Սակայն Կանգուն Է


Հոկտեմբեր 27-ի երեկոյեան, վարչապետ Փաշինեան դարձեալ պատգամ յղեց ժողովուրդին, վստահեցնելով որ այսօր Արցախը թէկուզ վիրաւոր, սակայն կանգուն է, եւ այս ամէնը առաջին հերթին մեր հերոսական բանակի, ժողովուրդի, մարդու շնորհիւ է, յայտարարեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Ատրպէյճանի ռազմաքաղական ղեկավարութիւնն այնքան է յաղթական լուրերով անել սեփական հանրութեանը, որ նրանք արդէն երկար ժամանակ ամէն օր, ամէն րոպէ, ամէն վայրկեան սպասում են Արցախի անկման, իրենց վերջնական եւ անշրջելի յաղթանակի մասին լուրին: Ատրպէյճանի հանրութիւնը, սակայն, այդ լուրը չի ստանալու, Ատրպէյճանի հանրութիւնը այդ լուրը չի ստանալու, եւ այս լուրի անվերջ սպասումն է, որ քանդելու է Արցախը նուաճելու ատրպէյճանական պլանները:

«Արցախի ժողովուրդը, հայ ժողովուրդը, ամբողջ ժողովուրդը կուռելու է անմնացորդ՝ ամէն ծառի, ամէն քարի, ամէն սանտիմետրի, ամէն միլիմետրի համար, եւ անհրաժեշտ պահին ճշգրիտ հասցուած հակահարուածը հակառակորդի համար կործանարար փուլգման էֆեկտ է ունենալու: Հենց այս պահը հասունացնելն է Արցախի պաշտպանութեան բանակի խնդիրը, եւ մենք պէտք է ամէն ինչով աջակցենք, թեւ ու թիկունք լինենք: Այս խնդիրները լուծման համար մեզ հարկաւոր է ժողովրդական ուժերի բացառիկ համախմբում եւ կարգապահութիւն: Ռազմական դրութեան, առաւել եւս

մարտական դրութեան պայմաններում պիտի գործի հրամանները անվերապահօրէն եւ առանց քննարկման կատարելու տրամաբանութիւնը: Հրամանները չկատարողները, հրաման կատարելու կամքը սասանողները պէտք է ենթարկուեն խստագոյն պատժի, պատասխանատուութեան եւ հանրային արգահատանքի» ըսաւ Փաշինեան:

«Մեր հնարաւորութիւններն անսահմանափակ չեն, բայց Արցախի Պաշտպանութեան Բանակն ունի բաւարար չափով զէնք եւ պոտենցիալ՝ իր առաջ դրուած խնդիրները լուծելու համար: Այո, մենք աշխարհում ունենք բազմաթիւ թշնամիներ, բայց ունենք նաեւ բարեկամներ, որոնք դժուար պահին կանգնում են, կանգնած են եւ



ՊՆ ներկայացուցիչ Արծրուն Յովհաննիսեան

կը կանգնեն մեր կողքին: Շնորհակալ հայ ժողովուրդը այդ վերաբերմունքը երբեք չի մոռանայ: Երբեք չի մոռանայ», - աւելցուց վարչապետը:

Միւս կողմէ, Հայաստանի Պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցիչ Արծրուն Յովհաննիսեան յայտնեց որ, մեր ստորաբաժանումներու հարուածներէն յետոյ կը նահանջեն, կը փախչին, եւ այս ուղղութեամբ մարտական գործողութիւնները ոչ մեծ լարուածութեամբ կը շարունակուին:

Յովհաննիսեան տեղեկացուց, որ դաշտավայրերէն ետք Ատրպէյճանի զինուած ուժերը կը փորձեն զարգացում ապահովել նաեւ Լեռնային բարդ տեղերը, սակայն յաջողութեան չեն հասնիր եւ մարտավարական աւելի դժուար պայքար է որ կ'ընթանայ:

«Երէկ ինչպէս ներկայացրի, հարաւային ուղղութեամբ Ատրպէյճանի զինուած ուժերի առաջխաղացումն այս պահի դրութեամբ ունի հետեւեալ տեսքը՝ ըստ հուլիսեան, Որոտան գետի երկայնքով ձեւաւորուած ռազմաճակատ կայ: Այսօր նաեւ փորձել են Բերդձորի ուղղութեամբ որոշակի յարձակում իրականացնել, ինչպէս նաեւ մօտենալ հարաւային ուղղութեամբ դէպի Հայաստանի Հանրապետութեան սահմանին, սակայն ոտնձգութիւնները ետ են մղուել, կիրառելով հրետանի եւ անօդաչու թռչող սարքեր՝ յաջողութեան չեն հասել», - ասուլիսի ժամանակ ըսաւ Յովհաննիսեան, աւելցնելով, որ պատերազմի բնոյթը որոշ չափով փոխած է:

«Արցախում ժողովուրդը Զրկուած է Միջազգային Կազմակերպութիւնների Կողմից Մարդասիրական Օգնութիւն Ստանալու Հնարաւորութիւնից»-. Արմէն Պալապուրդեան



Գ. ԽՈՏԱՆԵԱՆ

Լոս Անճելոսի Հայաստանի Հանրապետութեան Հիւպատոսարանէն ներս տեղի ունեցած մամլոյ ասուլիսի մը ընթացքին գլխաւոր հիւպատոս Արմէն Պալապուրդեան ներկայացուց Արցախի շուրջ տեղի ունեցող վերջին զարգացումները, ռազմական, մարդասիրական եւ դիւանագիտական գետնի վրայ:

«Ատրպէյճանի եւ Թուրքիայի սանձազերծած ակրէսիան Հայաստանի եւ Արցախի դէմ շարունակուած է միջազգայինօրէն դատապարտելի միջոցներով, այդ թւում պատերազմական յանցագործութիւնների կատարմամբ: Այս ռազմական յանձագործութիւնների հետեւանքով» Ատրպէյճանի եւ Թուրքիայի կողմից, ստեղծուել է մարդասիրական լուրջ ճգնաժամ: Աւերուել են, ոչնչացուել են բազմաթիւ կառուցներ, ենթակառուցուածքներ, քաղաքներ, գիւղեր: Յարձակման են ենթարկուել նաեւ առանձին

բնակավայրեր Հայաստան հանրապետութիւնում» ըսաւ դեսպան Պալապուրդեան:

Մարդասիրական իրավիճակի մասին խօսելով Հայ դիւանագէտը ըսաւ.- «Մարդասիրական այդ ճգնաժամը մի նրբերանգ ունի Արցախում ժողովուրդը գրկուած է միջազգային կազմակերպութիւնների կողմից մարդասիրական օգնութիւն ստանալու հնարաւորութիւնից: Բոլոր միջազգային կազմակերպութիւնները, քաղաքական խնդիրներից ելնելով Արցախի կարգավիճակի, հրաժարուել են եւ հրաժարուել են մարդասիրական օգնութիւն ցոյց տալ Արցախի Հայութեանը, որը գտնուում է այդ ծայրայեղ ծանր իրավիճակում:

«Իրավիճակի ամբողջ տարօրինակութիւնը կայանում է նրանում, որ այնտեղ ապրում են մարդիկ, բնակչութիւն, որը ունի մարդասիրական օգնութեան անհրաժեշտութիւն, բայց միջազգային կազմակերպութիւնները եւ երկր-

ները հնարաւորութիւն չունեն այդ օգնութիւնը տրամադրելու բնակչութեանը, ներառեալ կանանց, երեխաների եւ տարիքաւորներին»:

Պր. Պալապուրդեան նաեւ անդրադարձաւ մէկ այլ աղէտի մասին, որ կը սպառնայ ամբողջ տարածաշրջանին. «Աղետալի մարդասիրական իրավիճակ է ստեղծուել համաճարակով պայմանաւորուած նաեւ, որովհետեւ Ատրպէյճանական կողմը դիտաւորեալ կերպով թողնում է մարտերում սպաննուած զինձառաջողների դիակները մարտի դաշտում: Այսօր շատ լուրջ վտանգ եւ սպառնալիք է գոյացել ոչ միայն Արցախի, Հայաստանի եւ Ատրպէյճանի համար, այլ նաեւ մասնագէտների գնահատմամբ, շատ աւելի լայն շրջանակով: Այդ աղէտը կարող է տարածուել տարածաշրջանից դուրս», - ըսաւ հիւպատոսը:

Ներկայացնելով զինադադարի շուրջ տեղի ունեցող զարգացումները Դոկտ. Պալապուրդեան յայտնեց որ, մարդասիրական հրադադարի երկու փորձերը չպահանջուեցան Ատրպէյճանի կողմէ, որ կը մերժէ զինադադարի խախտման յատուկ միջոցներու հաստատումը:

Թուրքիոյ դերակատարութեան անդրադառնալով հիւպատոսը ըսաւ. «Այսօր մենք գործ ունենք Թուրքական ակրէսիային հետ, ոչ միայն Թուրքիայի մասնակցութեան Ատրպէյճանական ներխուժման, այլ նաեւ անմիջական ակրէսիայի: Բոլորիս յայտնի է որ Թուրքիան իր նպատակները եւ ձգտումները ունի տարածաշրջանում եւ այդ նպատակներից ամենէն կարեւորը, որ իրենք խնդիր են դրել, իրենց ազդեցութիւնը բարձրացնել, տա-

րածաշրջանը ապակայունացնելու միջոցով տարածաշրջանում էդնիկ գտումներ եւ կոտորածներ կազմակերպելու միջոցով եւ ամենեւին պատահական չէ, որ անմիջապէս մենք վերջիշում ենք ցեղասպանութեան իրենց կողմից յայտարարուող շարունակութեան հնարաւորութեան մասին: «Այդ հնչել է հենց Թուրքիայի նախագահ էրտողանի շուրթերից: Այսինքն չեն էլ թաքցնում այդ», շեշտեց Արմէն Պալապուրդեան:

«Թուրքիան նաեւ ձգտում է Միւսկի Խմբի համանախագահող երկիր դառնալ: Փաստը այն է որ, Թուրքիան ոչ միայն կողմնակալ է այս հակամարտութիւնում, Լեւոնային Ղարաբաղի ու Արցախի դէմ ակրէսիայի անմիջական մասնակից, այլ նաեւ անթոյլատրելի է Թուրքիայի մասնակցութիւնը որեւէ նման ձեւաչափով»:

Դեսպան Պալապուրդեան դրական գնահատեց Միացեալ Նահանգներու պետական քարտուղար՝ Մայք Փամփէյտի մի քանի յայտարարութիւնները, որոնց շարքին վերջին յայտարարութիւնը, որ երրորդ երկիրներ, մասնացոյց ընելով Թուրքիային, պէտք է գերծմնան մասնակցելու հակամարտութեան, աւելցնելով որ միայն այդ ճանապարհով հնարաւոր կ'ըլլայ խաղաղութիւն հաստատել եւ կողմերը բերել ընդհանուր սեղանի շուրջ: «Զմոռանա՞նք նաեւ որ, Մայք Փամփէյտն յոյս յայտնեց որ Արցախը կարենայ դիմակայել Ատրպէյճանի քայլերուն: Միացեալ Նահանգներու այս մօտեցումը գտնում ենք կառուցողական, սակայն աւելի շատ յստակ եւ ուժեղ քայլեր կատա-

Շար.ը էջ 16



Adam Schiff has always been there for the Armenian-American community. Standing shoulder to shoulder.

- For 19 years, Adam Schiff has fought the Turkish lobby, demanding recognition of the Armenian Genocide.
- In 2019, Congress passed Adam's legislation to finally recognize the Genocide. To state the facts.
- As Artsakh and Armenia face an attack from Azerbaijan and Turkey, Adam is calling on the U.S. to impose serious consequences on Azerbaijan and Turkey, and to formally recognize the Republic of Artsakh.

Adam Schiff has always stood with the Armenian people. And he always will.

Vote Adam Schiff
FOR CONGRESS

I would be honored to have your vote November 3rd.

– ADAM SCHIFF

www.adamschiff.com

PAID FOR AND AUTHORIZED BY SCHIFF FOR CONGRESS

«Միջազգային Հանրութիւնից Ակնկալում Ենք ԼՂ-ի Համար Կիրառելի Համարել «Անջատում Յանուն Փրկութեան» Բանաձեւը» Վարչապետի Հարցազրոյցը Հնդկական WION Հեռուստաընկերութեանը

WION - Ողջոյն եւ բարի գալուստ WION-ի Global Leadership Series հաղորդաշար: Այսօր մեր հիւրն է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը: Պարոն Փաշինեան, ողջունում եմ Ձեզ WION-ի եթերում:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան - Ուրախ եմ հիւրընկալուել Ձեզ:
WION - Մարտերը Ղարաբաղում շարունակուում են արդէն 4 շաբաթ: Զինադադարի մասին երկու համաձայնութիւն է ձախողուել արդէն: Արդեօք պատրաստուում էք երկարատեւ պատերազմի:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան - Գիտէք, սա, ըստ էութեան, մեզ պարտադրուած պատերազմ է, եւ Հայաստանը Ձեր նշած հրադադարի պայմանաւորուածութիւնների համատեքստում իր պարտաւորութիւնները կատարել է: Այդ Ատրպէյճանն է, որ չի կատարում իր պարտաւորութիւնները, եւ սա ունի պատճառներ: Խնդիրն այն է, որ այսօր Լեռնային Ղարաբաղի դէմ պատերազմում ներգրաւուած է ոչ միայն Ատրպէյճանը, այլեւ Թուրքիան եւ Թուրքիայի կողմից ռազմական գործողութիւնների գոտի Սիրիայից բերուած վարձկան անհրաժեշտներ: Դուք կարող էք պատկերացնել, թէ ինչպիսի խառը եւ խառնաշփոթ իրավիճակի հետ գործ ունենք: Ի դէպ, մենք ունենք տեղեկութիւններ, որ նաեւ Պակիստանից են գինեալներ մասնակցում ընդդէմ Ղարաբաղի պատերազմին: Եւ զուգէ թէ այս ամէնի բազմաշերտութիւնն է, որ հնարաւորութիւն չի տալիս կայունացնել իրավիճակը: Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հայութեանը, այս իրավիճակում նա այլ ընտրութիւն չունի, քան բոլոր հնարաւոր միջոցներով եւ միջնաւ վերջ պաշտպանուելը այնքան ժամանակ, քանի դեռ հարցին ինչ-որ դիւանագիտական կարգաւորում հնարաւոր կը լինի տալ:

WION - Ժողովրդին ուղղուած Ձեր ուղերձում Դուք ասել էք, որ առնուազն այս փուլում Ղարաբաղի հարցը չունի դիւանագիտական լուծում: Այդ դէպքում որ՞ն է լուծումը:

As ironic as it may sound, this pain has in a sense made my life all the more meaningful. This same pain has made me realize that it is possible to live, prosper, and have hope for life. To live and prosper as an Armenian in diaspora, away from home, but never, not even for a minute, giving up on that hope, that we will one day go back home. Albeit home (historical Armenia) is not "reachable" at the moment, the republics of Armenia and Artsakh are.

When reflecting on the idea of how pain and suffering can bring people together, I stumbled on Walter Brueggemann's work. Brueggemann is a prominent American theologian and believes that the task of prophetic ministry and imagination is that of bringing people to engage with their experiences of suffering and death, which energizes and links people to hope. Brueggemann explains that this hope helps the individual cut through the despair which might otherwise seem unresolvable or unending.

I really think the present war in Artsakh (Nagorno-Karabakh), that has been on-going for nearly a month now, can generate this same hope. This hope, which is the prophetic ministry of the Armenian people, will cut through the pain and despair of the Armenian Genocide and turn it to peace and justice - the peace and the justice Armenians have been longing for their whole lives.

For some context on the war, here's a little history of the region:

The Republic of Artsakh or Nagorno Karapagh is a de facto independent state and shares borders with Armenia, Iran, and Azerbaijan.

Artsakh is considered to be the second Armenian Republic. The capital of Artsakh is Stepanakert and is the largest city of the Artsakh Republic. It is the cultural, educational, and economic center of the region. Stepanakert is located on the eastern slopes of Karapagh's mountain chain, at the left bank of the Vararakn River. The capital was originally named after this river but was later renamed in honor of Bolshevik politician and revolutionary Stephan Shahumian.

Stepanakert is a modern city with wide, clean streets, new builds, and nice parks. The predominantly Armenian-populated region (99.7%) of Nagorno-Karapagh was claimed by both the Azerbaijan Democratic Republic and the First Republic of Armenia when both countries became independent in 1918 after the fall of the Russian Empire, and a brief war over the region broke out in 1920. The dispute was largely shelved after the Soviet Union established control over the area and created the Nagorno-Karapagh Autonomous Oblast (NKAO) within the Azerbaijan SSR in 1923.

When the Soviet Union fell, the region re-emerged and became the subject of what I see is a series of endless wars and suffering between Armenia and Azerbaijan. In 1991, a referendum was held in the NKAO and the neighboring Shahumian region which resulted in a declaration of independence. Ethnic conflict between Armenians and Azeris led to the 1991-1994 Nagorno-Karapagh War, which ended with a ceasefire along the current borders.

The recent military strike and the war against Artsakh by Azerbaijan, Turkey, and Islamist Jihadists, is actually a matter of life or death for Armenians. As I'm writing my thoughts down, the capital Stepanakert and other cities are being heavily bombarded. The country's historical churches and monuments are being burnt to the ground and hundreds of innocent civilians are dying. Azerbaijan and Turkey consist of more than 90 million people. Whereas Armenia and Artsakh are barely three million put together. I cannot help but be reminded of the story of David and Goliath in the Bible, mainly when looking at the power discrepancies.

Is history repeating itself? Most likely, yes. 105 years on, we are faced with the same power trying to bring us down to our knees.

We are in a different scenario today than that of the crimes and ethnic cleansings of 1908 and 1915, though. Let me tell you why I think that is.

On September 30, 2019, I was lucky enough to be in Stepanakert, Artsakh, for the second time, presenting my book *Armenian Diasporan Lives: As I Saw Them*. The event took place in the National University of Artsakh. I also had a meeting with the Minister of Foreign Affairs during this visit. I enjoyed the beautiful country and my fellow Armenians living in Artsakh. They shared their passion for the land and for the Armenian identity. The landscape is so beautiful and the people even more so. One

year on, and I am still in awe of all the beauty. It is truly life changing.

Today's war in Artsakh is in a sense a battle to hold on to that beauty, that of the land and of its peoples' hearts. The beauty of being Armenian, really. It is this beauty that is being so passionately protected by the Armenian soldiers who are committed to defend their land up to martyrdom. The young boys on the frontline are fighting because they want to live their lives in their homeland with dignity.

For what it's worth, my intent while writing this was not to focus on the Artsakh war with regards to what it might mean in the current geopolitical scene of the region and the world. Many proxy wars are going on in the world and numerous political analyses are being written in the media. A whole separate four pager could be written up about that. My perspectives in this article are rather those of an ordinary Armenian with strong attachments to his national, cultural, and Christian heritage and believes that the latter is possible through the homeland.

Looking at Artsakh from a patriot's perspective, no war or physical force of any kind can eradicate its beauty. Armenians want peace, justice, and the right for the self-determination and the recognition of their homeland. From an Armenian's perspective living in a scattered diaspora, I see bloodshed and unrest: a very high price we continue to pay, in our struggle for peace and justice.

Armenia's total homeland area was around 300,000 sq-km. The present Republic of Armenia is 29,743 sq-km. We lost almost 90% of it over the years, during the Genocide, and the many political upheavals which followed thereafter. There is indeed not much land left to spare, is there?

As I follow the fierce battle from a distance, my prayers are with my fellow Armenians. I stand with my people as they struggle to stay alive with dignity. I stand with my army in Artsakh as they struggle for peace and justice. May the soul of the Armenian soldiers and the civilian martyrs rest in peace.

The beauty of Artsakh will never fade, and it will not be defeated.

Reverting to the biblical story of David and Goliath: David beats Goliath, even though the fight and power dynamics were uneven. David beats Goliath because he was fighting for the GOOD cause.

This is the Armenians' war for peace and justice. It is through this struggle for peace and justice that GOOD is created.

And the GOOD always wins.

Hrayr Jebejian is General Secretary of the Bible Society in the Gulf. He holds a Doctor of Ministry degree in Bible Engagement from the New York Theological Seminary. Jebejian is the author of three books, along with articles published in academic journals and encyclopedias. He is a recipient of the Ambassador of the Motherland medal from the Ministry of Diaspora of the Republic of Armenia.

STOP FALSE ACCUSATIONS STOP SPREADING FALSE INFORMATION

Piknik cheese made by **Nordex Food** is a private and family-owned company. The founders and the owners are 100% Danish. **NO DONATIONS ARE MADE TO ANY COUNTRY WHAT SO EVER.** Legal action will be taken against any company or individual who spreads the false accusations.

ԴԱԴՐԵՑՈՒՑԷՔ ԱՆՀԻՄ ՉՐՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԱԴՐԵՑՈՒՑԷՔ ՍՈՒՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՓՈԽԱՆՑԵԼԸ

«Փիքնիք» պանիրը պատրաստուած է «Նորտեքս Ֆուդ»ի կողմէ, որ անձնական ընտանեկան ընկերութիւն մըն է: Հիմնադիրները և տերերը 100 տոկոսով դանիացի (Danish) են:

ՈՐԵՒԷ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ, ՈՐԵՒԷ ԵՐԿՐԻ ՀԵՆ ԿԱՏԱՐՈՒԱԾ:
ՕՐԻՆԱԿԱՆ-ԴԱՏԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ ՊԻՏԻ ԱՌՆՈՒԻՆ ՈՐԵՒԷ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՍ ՈՒԷՒ ԱՆՀԱՏԻ ԴԷՍ, ՈՐ ԿԸ ՏԱՐԱԾԷ ԱՆՀԻՄ ՉՐՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ:




Dear customer,

NORDEX FOOD is a privately owned Danish company with production and sales of white cheese to the whole world.

The PIKNIK/Sütdiyari/Dairyland White Cheese is produced at our dairy in Austria with Austrian milk.

NORDEX FOOD do not support any political agenda in any country.

Best regards
NORDEX FOOD A/S

Martin Pedersen, CEO



Ռմբահարումը, Ռմբակոծումները եւ Խիղճը

«Քառսի մէջն իսկ ելք կայ ...» Սոււն Յու

ՄՈՎՍԵՍ ԾԻՐԱՆԻ

Ի տես մարդու անասնական բնագոյներուն յագուրդ տուող վայրագութիւններուն, բարին պատակներով տինամիթի ուժանակը ստեղծած ըլլալուն համար Ալֆրէտ Նոպէլը գղջաց ու խղճի խայթ ունեցաւ: Ան իր ակամայ գործած «մեղքը» քաւելու համար, համապատասխան մրցանակներ ստեղծեց յանուն մարդու բարօրութեան ու աշխարհի խաղաղութեան:

Այն բոլոր պատերազմները, մարդկային խժդժութիւններն ու աւերները, որոնք տեղի կ'ունենան մարդասիրական գաղափարներու վահանի ներքոյ, ծրագրուած ու մտածուած ձեւով կը գործադրուին ամենայն սառնասրտութեամբ ու առանց դոյզն խղճի խայթի:

Բացի Նոպէլէն, մեզի ծանօթ չէ գիտնականի կամ ընկերութեան անուն մը, որ կործանիչ գէնքեր ստեղծելէ ու արտադրելէ ետք խղճի խայթ ունենայ ու հետեւի Նոպէլի օրինակին:

Խիղճ եւ այն ալ խղճի խայթ: Սկեպտիկ մը պիտի ըսէր որ «ո՞վ կորսնցուցեր է Խիղճ ըսուածը եւ դուք, այս դժնդակ օրերուն կը փնտռէք զայն ամօթահար Պէյրուսի աւերակներուն մէջ եւ կամ Արցախի խրոխտ լեռներուն վրայ: Միայն թէ յանկարծ չըսէք թէ - «Խիղճը» ինքը հաւատքն է, այն մեր մէջ է, կայ ու կը մարդկայնացնէ մեզ:

Ինքն իր կեանքի բարելաման ու բարօրութեան համար ինչ ուժ որ ստեղծած եւ կամ գէնք շինած է մարդ արարածը, այդ բոլորը գործածած է նաեւ ինքն իր դէմ, ինքն իր տեսակն ու իր ստեղծած մշակութիւն իսկ ոչնչացնելու համար:

Հիրոշիմայէն ու Նակագաքիէն ետք, իր ուժգնութեամբ երրորդ մեծագոյն ռումբը պայթեցաւ Պէյրուսի նաւահանգիստին մէջ ու աւերեց քաղաքն ու արուարձանները, անգամ մը եւս աւերելով՝ արդէն իսկ բզկտուած քաղաքացի-

ներու հոգեկան աշխարհն ու կորովը: Ո՛չ ոք գիտցաւ, ոչ ոք գիտէ եւ ոչ ալ որեւէ յոյս կայ որ ապագային ոեւէ մէկը գիտնայ, թէ ինչո՞ւ ըրին, ո՞վ ըրաւ եւ կամ ի՞նչ նպատակով, ո՞վ թելադրեց որ ընեն: Մէկ բան յստակ է միայն, թէ ըրին առանց խղճի խայթի: Ի՞նչ տեսակ խիղճի մասին կրնայ ըլլալ խօսքը, երբ վերջին տասնամեակներուն հա ըլուրաւոր ականուած ինքնաշարժներ պայթեցան ու հազարաւոր անմեղ քաղաքացիներ զոհուեցան ըլլալ Լիբանանի թէ Լիբանանի տարածքէն դուրս: Յանուն ո՞ր մէկ սրբազան նպատակի, ո՞ր մէկ մարդկային գաղափարի սութիւն իրագործելու, կամ որո՞ւն հայրենիքն ու կեանքը պաշտպանելու համար:

Առաջին ու երկրորդ համաշխարհային պատերազմներէն ետք ամենադժնդակ ու ամենաանհաւասար մարտերէն մէկը տեղի կ'ունենայ մեր օրերուն՝ ազատատենչ Արցախի մէջ: Նախադրձակ թշնամին, աւելի ճիշդը թշնամիները (չորս տարբեր տեսակի ու տարբեր տարողութեամբ ուժերու դէմ կենաց մահու անհաւասար կռիւ կը մղենք ...) չկարողանալով ճակատի վրայ օրինաւոր զօրքի դէմ յաջողութիւններ արձանագրել, անգործութենէ մղուած կը սկսին կուրօրէն ռմբակոծել խաղաղ, անգէն բոլորովին անմեղ բնակչութեան բնակավայրերը, ամենայն վայրագութեամբ, անգամ մը եւս ապացուցելով որ ո՛չ խիղճը եւ ո՛չ ալ մարդասիրական գաղափարները տեղ կրնան ունենալ քաղաքականութեան մէջ: Ի գուր չէ որ Հին Յոյներու պատերազմի, գողերու, դիւանագիտութեան ու պոռնիկներու աստուածը նոյնն էր՝ Արէսը:

Այս դժնդակ օրերուն խիղճի հարցը սեղանի վրայ կը դրուի, պարզապէս անոր համար որ տակաւին մենք ունինք որոշ ղեկավարներ ու անոնց հետեւորդներ, որոնք կը հաւատան խիղճի գոյութեան ու փրկութեան գրաւը կը դնեն օտար

մեծապետական ուժերու մարդասիրական գաղափարներու, մարդու իրաւունքներու եւ մանաւանդ Մեծն Արդարութեան վրայ: Մեր խիստ մարդասիրական կրօնքն ալ նոյնը կ'ուսուցանէ: Ու մենք փաստօրէն կը մղուինք «բարեացակամութիւն» մուրալու մեր հանդէպ անբարեացակամ կեցուածք ճշդած մեծապետական ու խորհրդաւոր ուժերէն...:

Իսկ մեր երդուեալ թշնամիները իրենց մեծարուած բանաստեղծի իսկ վկայութեամբ՝ վաղո՞ւց «Արդարութիւնը կապած են ձիու պոչին» ու կը քաշկուտեն զայն երկրագունդի տարբեր տարածքներու վրայ, խիղճի փոխարէն եաթաղանը ճօճելով աստուածներու դէմ:

Սիրելի ընթերցող, կամայական մենք դարձեալ առանձին ենք ու առանձին պիտի մնանք, յենած՝ մեր կամքի ու սեփական ուժի վրայ:

Արեւմուտքն ու ԱՄՆ-ի նման մարդկային իրաւունքներու »պաշտպան« հօր ուժերը անկողմնակալութեան պիտակի տակ անաչառ ըլլալու տպաւորութիւն կ'ուզեն ձգել:

Մինչդեռ, յատկապէս այս պարագային Անկողմնակալութիւնն ու Անաչառութիւնը բոլորովին տարբեր բաներ են:

Անաչառութիւնը արդարութեան իրագործում կ'ենթադրէ, իսկ անկողմնակալութիւնը՝ պատասխանատուութենէ խուսափում: Անոնք ի տես միջազգային օրէնքներու կոպիտ խախտման ու մարդկային տարրական իրաւունքներու ոտնահարման, դիտողի դեր կը կատարեն, ու անուղղակիօրէն կը նպաստեն մեր թշնամիներու դիւանապետութեան մէջ: Ի գուր չէ որ Հին Յոյներու պատերազմի, գողերու, դիւանագիտութեան ու պոռնիկներու աստուածը նոյնն էր՝ Արէսը:

Այն ինչ որ տեղի կ'ունենայ այսօր Արցախի անգէն բնակչութեան նկատմամբ, ոչ միայն անարդար ու անմարդկային, այլեւ ապօրէն է միջազգայնօրէն ու իրաւական հողի վրայ խիստ դատապարտելի: Իսկ Պէյրուսի վերջին ռմբահարումը ծայր աստիճան հակա-

մարդկային սարսափազդու արարք մըն էր, ոչ միայն իր մեծղի տարողութեամբ, այլեւ տեղի կ'ունենար բազմակողմանիօրէն կաթուածահար եղած երկրի մը տագնապահար առօրեայի ընթացքին: Քաղաքական անկայուն վիճակ, պատերազմի արհաւիրք, անապահովութիւն, տնտեսական ահազնացող ճգնաժամ, մահաբեր համաճարակ, ապագայի անորոշութիւն, հազարաւոր զոհեր, վիրաւորներ ու յանպատրաստից տնանկներ, բազմաթիւ հիւանդանոցներու եւ այլ հանրային կառոյցներու քանդում, հետեւաբար նաեւ՝ համատարած գործազրկութիւն, ծայրահեղ թշուառութիւն, ահաւոր ընկճախտ ու... մասամբ նորին: Փոխանակ այս բոլորի դրդապատճառը հանդիսացող «ղեկավարները» դժոխք դրկելու, անոնք խիղճ ըսուածը մէկ կողմ դրած՝ Պէյրուսի վերածեցին դժոխքի: Արցախը եւս կը փորձեն վերածել դժոխքի: Ստեղծուած իրավիճակի տպաւորութիւնը այն է, որ մենք Արցախի մէջ անգամ մը եւս ոտքի կոխան կրնանք ըլլալ ի հաշիւ մեծապետական սակարկութիւններու ու կողմնակի շահերու: Թող լաւ իմանան սակայն, որ դարաւոր մեր պատմական փորձառութիւններն ու փորձութիւնները թրծած ու ջրդեղած են մեր ազգային գիտակցութիւնը, մենք միասնական ենք դարձեալ, ու Արցախը Հայաստան է, ԴրախտաՎայր, Սուրբ Աւետարանի անբեկանելի վկայութեամբ իսկ: Արցախը բնակուած բնիկ հայերով կը մնայ «սրբօրէն բեղուն» դրախտաՎայր ու երբեք դժոխքի չի վերածուիր...:

Իբրեւ թէ խղճահարութենէ դրդուած՝ աշխարհը պատրաստ է օգնելու թէ՛ Լիբանանին եւ թէ՛ Արցախին: Արցախահայութիւնը ինքը, իր անձուկ պայմաններով իսկ, թէ՛ նիւթապէս եւ թէ՛ բարոյապէս նեցուկ կանգնեցաւ լիբանանահայութեան: Լիբանանահայութիւնը իր հերթին նիւթաբարոյական օգնութեան գուգահեռ, արեամբ եւս կը շարունակէ զօրակցիլ Արցա-

Շար.ը էջ 19

#ArtsakhStrong
#GlobalArmeniansUnite
**WE ARE OUR BORDERS.
ALL FOR ARTSAKH.**
[Donate Now](#)

**TO DONATE VISIT
WWW.ARMENIAFUND.ORG/DONATE**

Բարեւ, Արցախը Ե՛ս եմ, Իմ ժողովուրդը Կը Պայքարի, Մեր Պայքարը Արդար Է...

ԼԻԼԻԹ ՀԱՆՉԻ ՊՕՂՈՍԵԱՆ

«Մենք՝ արցախցիներս արդէն ծնւում ու ապրում ենք այնպիսի գիտակցումով, որ ցանկացած պահի կարող է պատերազմ սկսել: Միեւնոյն ժամանակ հաւատում էինք, որ այդ պահը շատ հեռու է եւ շատ ապահով էինք մեզ զգում Ստեփանակերտում: Սեպտեմբերի 27-ի առաւօտն այլ բան ապացուցեց: Արթնացանք պայթիւնների, տազնապի, անօդաչու թռչող սարքերի խլացնող ձայներից: Ստեփանակերտի չորսբոլորը ծուխ էր, մարդիկ վազում էին դէպի ապաստարաններ: Մենք հարեւաններով հաւաքուել էինք բակում ու փորձում էինք առաջնագծում ծառայող մեր բարեկամներին ու ընկերներին զանգել, հաւաստիանալ, որ լաւ են, բայց ապրդիւն, կապ չկար: Մի կերպ խօսեցինք ծանօթների հետ, պարզուեց Ստեփանակերտի բնակելի թաղամասերն են հրետակոծել, սահմանին մօտ քաղաքներն են թիրախաւորել. էլի քաղաքացիական անձինք են զոհուել, էլի Մարտունիում, էլի երախա... ինչպէս 16-ին էր», -մեզ հետ զրուցում պատմում է միջազգային իրաւունքի մասնագէտ, Արցախի պետական համալսարանի դասախօս Յանա Աւանեսեանը:

-Վէրքերը դեռ չէին սպիացել, նորից բացեցին, ինչո՞ւ այս գնով: -Թէկուզ 2016-ից շատ չի անցել, եւ վէրքերը դեռ մըմռում են, մենք միեւնոյնն է յոյս ունէինք, որ 21-րդ դարում, երբ կարծես ապրում ես քաղաքակիրթ աշխարհում, նման վայրագութիւններ, ինչպիսիք Ատրպէյճանն է կատարել, չեն կարող լինել: Կեանքում էլ է այդպէս, չէ՞, դիմացինիդ քո արջիմով ես չափում: Երբ մենք կրթում,



զարգանում, կայանում ենք, թւում է, թէ մեր դիմացինն էլ է նոյն ուղին անցնում: Ցաւօք, ամենեւին այդպէս չէ, մեր դիմացի կանգնածների նպատակը մեզ ոչնչացնելն է: Նրանց համար տարբերութիւն չկայ դպրոցականի, եկեղեցում կանգնած աղօթողի ու սահմանին կանգնած զինուորի միջեւ, նոյն դաժանութեամբ ռմբակոծում են ռազմական օբյեկտները, դպրոցները, տները, եկեղեցիներն ու մշակութային կեդրոնները: Բաւական է ունենալ մի-նիմալ գիտելիքներ մեր տարածաշրջանի ու պատմութեան մասին՝ հասկանալու համար ով է ազդեսորը եւ ում է պէտք այս պատերազմը: Ցաւօք, միջազգային դերակատարներն առաջնորդում են միայն սեփական շահով եւ ոչ ազնայտ իրականութեամբ: Մենք դա վաղուց պէտք է հասկանայինք: Այսօր մեր միակ յոյսն ու ապահւնը մեր գինուորներն են, որոնք պայքարում են յանուն ամբողջ հայ ժողովրդի գոյութեան իրաւունքի: -Ինչպիսի՞ եռանդով է Արցախն իր ինքնիշխանութեան հիմքերը կերտել տարիներ շարունակ:

Մի՞թէ հնարաւոր է Արցախի ժողովրդին կանգնեցնել անգամ այս անհաւասար ուժերի պայքարում: -Ճիշդ է, ուժերն անհաւասար են, մեր դիմաց կուռւմ է Ատրպէյճանը՝ Թուրքիայի օժանդակութեամբ ու իր ահուելի ֆինանսական միջոցներով, սակայն նման ռեսուրսները չեն յաղթանակի գրաւականը: Ամենակարեւորը կամքն է ու յաղթանակի կարեւորութեան գիտակցումը: Մեր գինուորները հասկանում են, որ մեր ժողովրդը պայքարում է ազատ ու ապահով ապրելու իր իրաւունքի համար: Հայ ժողովուրդն իր բազմադարեայ պատմութեան ընթացքում այսպիսի փորձութիւնների միջով չի, որ անցել է, աւելի յամառ կռիւներից է յաղթանակով դուրս եկել: Այսօր էլ մենք զգում ենք Հայաստանի Հանրապետութեան բոլոր քաղաքացիների եւ սիրււքի մեր հայրենակիցների ներկայութիւնը մեր կողքին: Ամէն մէկը փորձում է օգտակար լինել. մէկը՝ ռազմաճակատում, միւսը՝ թիկունքում: Միասնականութեան ոգին է տիրում ամենուրէք, բոլորս վստահ ենք՝ յաղթելու ենք, վերականգնելու ենք, աւելի ենք զարգանալու: Անտանելի ծանր են կորուստները, ամէն զոհուածի հետ մի մասնիկ էլ մեզանից է պոկվում: Միեւնոյն ժամանակ, զգում ենք, որ պարտական ենք նրանց մեր կեանքով, ուստի թուլանալու ժամանակ չունենք: Արդէն պլանաւորել ենք մեր բնակավայրերի վերականգնման աշխատանքները, բոլոր մասնագիտութիւնների մարդիկ են դիմում՝ Արցախ գալու եւ այդ աշխատանքներին մասնակցելու համար: Շատ գործ ունենք անելու բոլոր ոլորտներում: -Դուք Արցախն էք. ո՞րն է Ատրպէյճանի քաղաքացիներին եւ միջազգային հանրութեանն ուղղուած ձեր ուղերձն իբրեւ Արցախի Հանրապետութեան քաղաքացի:

-Մեր պայքարն արդար է: Եւ մենք՝ հայերս, վճռական ենք ազատութեան ու անկախութեան համար մղուող պայքարում: -Ցաւալի է, որ այս ամէնի միջով անցնում են մեր երախաները: Այսպիսով նաեւ նրանց կրթութիւն ստանալու իրաւունքն է ոտնահարուել: Ի՞նչ վիճակում են նրանք: -Պատերազմի պատճառով բնակչութեան մեծամասնութիւնը ստիպուած լքել է իր տունը: Շատ ծնողներ երախաներին ուղարկել են Հայաստանի Հանրապետութիւն՝ ծանօթ-բարեկամների մօտ, իսկ իրենք լծուել Արցախի պաշտպանութեան գործին: Օրեր առաջ յայտարարուեց, որ քսանչորս հազար արցախցի երախաներ զրկուել են կրթութեան իրաւունքից: Միանշանակ երախաների համար այս ամէնը կրկնակի հոգեբանական ճնշում է: Պատկերացնո՞ւմ էք, պատերազմ, համալարակ, անծանօթ միջավայր, մտերիմների կորուստ...: Բարեբախտաբար մենք ունենք Հայաստանի Հանրապետութիւն, որտեղ մեր հայրենակիցները հսկայական աշխատանք են տանում թէ՛ երախաների եւ թէ՛ տեղահանուած այլ անձանց հետ՝ մարդկանց սոցիալական, հոգեբանական խնդիրները հնարաւորինս մեղմելու համար: Երախաներն ընդգրկուել են տեղի դպրոցներում, մասնակցում են տարբեր խմբակների, նրանց այցելում են հոգեբաններ եւ այլ մասնագէտներ: Արդէն նշել եմ, որ արցախցիներս ապրում ենք այնպիսի գիտակցումով, որ ցանկացած պահի կարող է պատերազմ սկսել: Դա արդէն ազդում է բոլորիս հոգեբանութեան վրայ, բայց մենք երբեք չենք ապրում ատելութեան միջավայրում ու երախաներին սովորեցնում ենք ոչ թէ ատել հակառակորդին, այլ սիրել իր երկիրը: «ԱԿՕՍ»

Արցախի Զինուորներին ԱՆԱ ՄԻԻՇԲԱՄՊԱՐԵԱՆ			
Իմ Քաջարի Զինուոր Դաժան ճակատագրի հարուածներ կրած Այսքան ցաւ տեսած Այսքան դաւ տեսած Իմ ժողովուրդը լալիս է նորից... Համայն հայութեան հայեացքը գամուած է քեզ Իմ քաջարի հայ զինուոր... Գնա ու դարձիր մարտիկն ու պատմիչը այս հերոսամարտի Ինչպէս Եղիշէն մեծ Աւարայրի... Եւ օրհնեալ լինի պահն այս վսեմ, Որ հայ ռազմիկի յաղթական ձայնը Մօր աղօթքի պէս կը բարձրանայ վեր Վեր... Առ Աստուած... Ապա կ'իջնի ցած Մտնելով ամէն զինուորի հոգին... Քանզի յանուն հայրենի հողի, Նախնեայց հաւատքի Կռուի եւած զինուորը Երբեք չի պարտուի... Գնա իմ զինուոր... Այսօր քո սուրն է, որ պետք է	փրկի Մեր մագաղաթը եւ սուրբ Հայրենին: Յանուն Հայոց Աշխարհի Արամազի առիւծները չեն կարող Քրիստոսի գառնուկներ դառնալ... մռնչաց քուրմը Սուրը խրելով Մեծ Լուսաւորչի ամբասիր սիրտը Չհասկանալով, որ գառնուկներն այդ Առիւծ կը դառնան եթէ դիպչեն Մեր հայրենիքին, Մեր սուրբ հաւատքին, Մեր խաչքարերին... Սակայն դարձանք մենք ոչ միայն գառնուկ Այլեւ քաւութեան նոխազն ամբողջ աշխարհի... Ուրեմն հիմա եկէք սթափուենք Ու ոտքի կանգնենք... յանուն անցեալի Յանուն ներկայի Յանուն յաղթանակող Հայոց աշխարհի... Տէր Ողորմեա... Կատարուած ողբերգութիւնը	մի դար է դառնում Սակայն նորից լռում է աշխարհ Ու կոյր ծեւաճում... Տէր իմ ողորմեա... Մի նոր Տէր Զօր մի նոր Գողգոթա... Խաչուած հաւատք, կոյր արդարութիւն Տէր իմ ողորմեա... Նահատակները կորած մոլորակ Ապրող սերունդը չարքից հալածուած Արիւն են քամում որդուդ աչքերից... Իմ հայ ժողովուրդ ո՞ր մեղքիդ համար Տէր իմ ողորմեա Մի ամբողջ աստուածութիւն մորթուեց Աշխարհը կոյր ձեւացաւ ու լռեց Առանց մեղաւորի զգացողութեան Փորձում են հիմա նորից կրկնել... Չհասկանալով որ այս աշխարհում Երկու անգամ ՔՐԻՍՏՈՍ չեն խաչում...	Մարտահրաւեր են նետում աշխարհին Չեռքերդ հեռու այս սրբութիւնից Գթասիրտ Աստուած Տէր իմ ողորմեա... Կանք Առէք Կանգ առէք մարդիկ Լռեցրէք թնդանօթները Անտուն, թափառական Փոքրիկն է գալիս... Պ ա տ ա ռ ո տ ու ա ծ հագուստներով Բոկոտն, քաղցած Արցունքն աչքերին աւերակներու մէջ փնտռում անվերջ ոչ թէ ժպիտը կորած մանկութեան այլ կորած խիղճը համայն մարդկութեան... Կանգ առէք մարդիկ արթնացրէք ձեր հոգին Կանգնեցրէք պատերազմը Մի սպանէք անմեղ մակիկին Քանզի ամէն մի մեռնող մանուկ Մի կաթիլ ԱՍՏՈՒԱԾ է Մի յաւերժութիւն...

«Միջազգային Հանրութիւնից Ակնկալում Ենք

Շարունակուած էջ 7-էն

ընտրութիւն, բացի իրենք իրենց կեանքն ու իրաւունքները պաշտպանելը, մինչեւ այն պահը, երբ միջազգային հանրութիւնը կունենանայ ձեռնարկելու կոնկրետ միջոցներ՝ այս պատերազմը եւ բռնութիւնները կանգնեցնելու։

WION - ձեր նախորդ հարցազրոյցում Դուք նշել էք, որ Լեռնային Ղարաբաղի հայութիւնն առերեսւում է գոյութեանական սպառնալիքի հետ։ Մասնաւորապէս, Դուք նախագահ Էրդողանիմ համեմատել էք Հիտլերի հետ եւ մեղադրել ցեղասպանութիւն իրականացնելու մէջ։ Սակայն միջազգային հանրութիւնը կարծես չի արձագանքում։ Որո՞ւմք են Ձեր յետագայ անելիքները։

Վարչապետ Նիկոլ Փաշինեան - կարծում եմ՝ այն, ինչ տեղի է ունենում Լեռնային Ղարաբաղում եւ Թուրքիայի ներկայութիւնը՝ Թուրքիայի կողմից հայերի նկատմամբ վարուող ցեղասպան քաղաքականութեան շարունակութիւնն է։ Դուք գիտէք, որ 20-րդ դարի սկզբին՝ մասնաւորապէս, 1915 թուականին Օսմանեան Թուրքիայում տեղի է ունեցել Հայոց ցեղասպանութիւնը, որն աշխարհի բազմաթիւ երկրների կողմից արդէն իսկ պաշտօնապէս ճանաչուած է, եւ որի հետեւանքով էթնիկ գտում է տեղի ունեցել շատ մեծ տարածքների վրայ։ Եւ հիմա իմ գնահատականն այն է, որ Թուրքիան 100 տարի անց վերադարձել է Հարաւային Կովկաս՝ հայերի նկատմամբ ցեղասպան քաղաքականութիւնը շարունակելու համար։ Սա ունի կոնկրետ պրագմատիկ նպատակ։ Որովհետեւ Հարաւային Կովկասի հայերը վերջին խոչընդոտն են Թուրքիայի համար՝ իր իմպերիալիստական քաղաքականութիւնը դէպի հարաւ, արեւելք եւ հարաւ-արեւելք շարունակելու համար։ Եւ այս համատեքստում, այո՛, Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը գտնուած է գոյութենական վտանգի ներքոյ, եւ մենք կարծում ենք, որ հարցի լուծման ամենաճիշտ եւ պրագմատիկ ձեւը «անջատում յանուն փրկութեան» (remedial secession) բանաձեւի կիրառումն է՝ Լեռնային Ղարաբաղի հայութեան անվտանգութիւնն ապահովելու համար։

WION - Արդեօք կարելի է ասել, որ Հայաստանը յայտնուել է Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ ընթացող միջնորդաւորուած, անուղղակի պատերազմի թատերաբնում։

Վարչապետ Նիկոլ Փաշինեան - ոչ, ես չեմ կարող այդպիսի բան ասել, որովհետեւ Ռուսաստանը ներգրաւուած չէ պատերազմում, եւ Ռուսաստանը հանդէս է գալիս որպէս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկիր։ ԵԱՀԿ Մինսկի խումբն այն միակ միջազգայնօրէն ճանաչուած ձեւաչափն է, որտեղ պէտք է քննարկուի եւ լուծուի Ղարաբաղի հարցը։ Ռուսաստանը,

այո՛, Հայաստանի ռազմավարական գործընկերն է, բայց նա պատերազմի մէջ ներգրաւուած չէ եւ ավելի շատ ներգրաւուած է որպէս միջնորդ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահութեան Ղարաբաղի հարցը կարգաւորելու եւ տարածաշրջանում խաղաղութիւն եւ կայունութիւն հաստատելու գործում։ WION - ռուսաստանը փորձեց միջնորդութիւն ունենալ խաղաղութեան ձեռքբերման ուղղութեամբ, այնուհետեւ ԱՄՆ պետքարտուղար Մայք Պոմպեօն միջնորդական նախաձեռնութիւն համղէտ բերեց՝ ընդունելով Հայաստանի եւ Ատրպէյճանի արտգործնախարարներին։ Այսպիսով՝ երկու միջնորդական ջանքեր եւ ոչ մի արդիւնք։

Վարչապետ Նիկոլ Փաշինեան - գիտէք, ես կարծում եմ, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները պէտք է մէկտեղեն ջանքերը խնդրի կարգաւորման վրայ եւ ոչ թէ՛ առանձին նախաձեռնութիւններով հանդէս գան։ Եւ ես կարծում եմ, որ այս իրավիճակում ճիշտ կը լինի, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներ Միացեալ Նահանգները եւ Ֆրանսիան աջակցեն Ռուսաստանի խաղաղարար ջանքերին եւ ոչ թէ՛ իրենք փորձեն առանձին խաղաղարար նախաձեռնութիւններ ցուցաբերել։ Մանաւնդ որ, Ռուսաստանը, մօտ լինելով եւ ներկայ լինելով տարածաշրջանում, ավելի գործուն լծակներ ունի իրավիճակի վրայ կոնկրետ ազդեցութիւն գործելու համար։

WION - արդեօք դա նշանակու՞մ է, որ չէք մասնակցում Վաշինգտոնի նախաձեռնած խաղաղութեան գործընթացին։

Վարչապետ Նիկոլ Փաշինեան - մենք, ի հարկէ, մասնակցում ենք։ Մեր արտաքին գործերի նախարարն արդէն Վաշինգտոնում է եւ այսօր հանդիպելու է ԱՄՆ պետքարտուղար Մայք Պոմպեօյի հետ (խմբ. հարցազրոյցը տեղի է ունեցել հոկտեմբերի 23-ին)։ Ես ուղղակի շարադրեցի մեր դիրքորոշումը, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները պէտք է շարժուեն նոյն, այլ ոչ թէ տարբեր ուղղութիւններով։

WION - Անցեալ տարի Դուք այցելել էք Լեռնային Ղարաբաղ եւ յայտարարել, որ Լեռնային Ղարաբաղը Հայաստան է եւ վերջ։ Լեռնային Ղարաբաղը չի ճանաչուել Մակի կողմից։ Արդեօք կարծու՞մ էք, որ միջազգային հանրութիւնը կ'աջակցի Ձեզ։

Վարչապետ Նիկոլ Փաշինեան - մենք նախ պէտք է իմանանք Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան պատմութիւնը։ Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնն այս փուլում ծագել է 1988 թուականին խորհրդային միութեան ժողովրդավարացման շրջանում, երբ Միխայիլ Գորբաչովը խորհրդային միութիւնում ձեռնարկել էր վերակառուցման գործընթաց, եւ

այդ վերակառուցման գործընթացը ենթադրում էր ժողովրդավարութիւն։ Եւ Լեռնային Ղարաբաղի հայերը, որոնք միշտ կազմել են այդ տարածաշրջանի բնակչութեան 80 եւ ավելի տոկոսը, որոշեցին օգտուել իրենց խախտուած իրաւունքները վերականգնելու հնարաւորութիւնից։ Իսկ ինչ իրաւունք էր խախտուել. խնդիրն այն էր, որ խորհրդային միութեան ձեւաւորման շրջանում 80 եւ ավելի տոկոս բնակչութիւն ունեցող Լեռնային Ղարաբաղը ոչ թէ խորհրդային Հայաստանի կազմ մտաւ, այլ խորհրդային Ատրպէյճանի, եւ դա տեղի ունեցաւ Ստալինի կայացրած կամայական որոշման հետեւանքով։ Եւ 1988 թուականին Լեռնային Ղարաբաղի հայերը խաղաղ գործընթաց սկսեցին, որի արդիւնքում Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի խորհրդարանն ընդունեց Հայաստանի հետ վերամիաւորուելու մասին որոշում։ Հայ ժողովուրդը դա համարում է պատմական որոշում, որովհետեւ Հայաստանի խորհրդարանը նոյնպէս համանման որոշում կայացրեց։

Ինչ վերաբերում է միջազգային հանրութեանը, ես կարծում եմ, որ միջազգային հանրութիւնը պէտք է արձանագրի փաստերը։ Ամենակրեւոր փաստն այն է, որ այսօր Լեռնային Ղարաբաղը պատերազմում է այդ թուում միջազգային ահաբեկիչների դէմ։ Լեռնային Ղարաբաղն այս իմաստով գտնուած է միջազգային ահաբեկչութեան դէմ պատերազմում եւ քաղաքակրթական առջնագծում։ Եւ կարծում եմ, որ միջազգային հանրութիւնը, այո՛, պէտք է այս իրավիճակում կիրառի «անջատում յանուն փրկութեան» (remedial secession) բանաձեւը։

WION - Արդեօք ակնկալու՞մ էք Հնդկաստանի աջակցութիւնը Լեռնային Ղարաբաղի հարցում Ձեր դիրքորոշմանը, եւ ինչպիսի՞ աջակցութիւն էք ակնկալում Նիւ - դելիից։

Վարչապետ Նիկոլ Փաշինեան - ես արդէն ասացի՝ ինչ ակնկալում եմ միջազգային հանրութեան միւս ներկայացուցիչներից, ակնկալում եմ նաեւ Նյու - դելիից. արձանագրել, որ Թուրքիան կազմակերպել է ահաբեկիչների եւ վարձկանների տեղափոխումն Ատրպէյճան, եւ առանց Թուրքիայ այդ պատերազմը չէր սկսի։ Արձանագրել Ատրպէյճանի եւ Թուրքիայի ահաբեկչական խմբաւորումների նախալարձակ գործողութիւնները, արձանագրել, որ Լեռնային Ղարաբաղի հայութիւնը գտնուած է գոյութենական վտանգի առաջ, ցեղասպանութեան վտանգի առաջ եւ այս համատեքստում կիրառելի համարել «անջատում յանուն փրկութեան» (remedial secession) բանաձեւը Լեռնային Ղարաբաղի համար եւ ճանաչել նրա անկախութիւնը։

WION - Հրադադարի հաստատման ուղղութեամբ ջանքերը ձախողուել են, խաղաղութեանը միտուած միջազգային նախաձեռնութիւնները խաղաղութիւն չեն բերել։ Ի՞նչ էք կարծում՝ որքա՞ն երկար սա կարող է շարունակուել, արդեօք երկարատեւ պատերազմի էք նախապատրաստու՞մ։

Վարչապետ Նիկոլ Փաշինեան - Լեռնային Ղարաբաղի հայութիւնը, ինչպէս արդէն ասացի, մինչեւ վերջ պիտի պայքարի իր անվտանգութիւնը պաշտպանելու համար։ Բայց ես յոյս ունեմ, որ մեր գործադրած դիւանագիտական ջանքերը ըոպէ առաջ կը կանգնեցնեն պատերազմը։

UNITED STATES POSTAL SERVICE® (All Periodicals Publications Except Requester Publications)			
1. Publication Title Massis Weekly		2. Publication Number 0 6 6 7 - 3 1 0	
4. Issue Frequency Weekly, Except two weeks in August		5. Number of Issues Published Annually	
7. Complete Mailing Address of Known Office of Publication (Not printer) (Street, city, county, state, and ZIP+4®) 1060 N Allen Ave, Pasadena, CA 91104		3. Filing Date 10-31-2020	
8. Complete Mailing Address of Headquarters or General Business Office of Publisher (Not printer) 1060 N Allen Ave. Pasadena, CA 91104		6. Annual Subscription Price \$50	
9. Full Names and Complete Mailing Addresses of Publisher, Editor, and Managing Editor (Do not leave blank) Publisher (Name and complete mailing address) Vahe Atchabahan 1060 N Allen Ave. Pasadena, CA 91104			
13. Publication Title		14. Issue Date for Circulation Data Below	
15. Extent and Nature of Circulation		Average No. Copies Each Issue During Preceding 12 Months	
a. Total Number of Copies (Not press run)		3,500	
b. Paid Circulation (By Mail and Outside the Mail)		No. Copies of Single Issue Published Nearest to Filing Date	
(1) Mailed Outside-County Paid Subscriptions Stated on PS Form 3541 (include paid distribution above nominal rate, advertiser's proof copies, and exchange copies)		120	
(2) Mailed In-County Paid Subscriptions Stated on PS Form 3541 (include paid distribution above nominal rate, advertiser's proof copies, and exchange copies)		366	
(3) Paid Distribution Outside the Mails Including Sales Through Dealers and Carriers, Street Vendors, Counter Sales, and Other Paid Distribution Outside USPS®		2400	
(4) Paid Distribution by Other Classes of Mail Through the USPS (e.g. First-Class Mail®)		60	
c. Total Paid Distribution (Sum of 15b (1), (2), (3), and (4))		2946	
d. Free or Nominal Rate Distribution (By Mail and Outside the Mail)		40	
(1) Free or Nominal Rate Outside-County Copies included on PS Form 3541		40	
(2) Free or Nominal Rate In-County Copies Included on PS Form 3541		35	
(3) Free or Nominal Rate Copies Mailed at Other Classes Through the USPS (e.g. First-Class Mail)		300	
(4) Free or Nominal Rate Distribution Outside the Mail (Carriers or other means)		300	
e. Total Free or Nominal Rate Distribution (Sum of 15d (1), (2), (3) and (4))		375	
f. Total Distribution (Sum of 15c and 15e)		3321	
g. Copies not Distributed (See Instructions to Publishers #4 (page #3))		179	
h. Total (Sum of 15f and g)		3500	
i. Percent Paid (15c divided by 15f times 100)		84%	
16. Publication of Statement of Ownership <input type="checkbox"/> If the publication is a general publication, publication of this statement is required. Will be printed in the 10-31-2020 issue of this publication. <input type="checkbox"/> Publication not required			

ԿԱՐՁՈՒ ՄՐԱՇ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻՒ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻՁՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

(626) 797-7680

ՈւեֆԱ-ն Արգիլեց Իր Մրցաշարերու Խաղերու Անցկացումը Հայաստանի Եւ Ատրաքեյճանի Մէջ

Եւրոպական ֆուտպոլային Միութիւնը (ՈւեֆԱ) անորոշ ժամանակով դադարեցուցած է իր հովանիին ներքեւ անցկացուող ակումբային եւ հաւաքականներու մրցաշարերու հանդիպումներու անցկացումը Հայաստանի եւ Ատրաքեյճանի տարածքներուն վրայ, կը հաղորդէ կազմակերպութեան պաշտօնական կայքը:

Որոշումը կապուած է Արցախի մէջ ընթացող ռազմական գործողութիւններուն հետ: Երկու երկրներու ֆուտպոլային ֆետերացիաները իրենց խումբերու տնային հանդիպումներու համար պէտք է ներկայացնեն ալլընտրանքային վայր:

ՈւեֆԱ-ն կը հետեւի իրադարձութիւններու զարգացմանը: Կը նշուի, որ այս որոշումը չի վերաբերիր յաջորդ ամրան Պաքուի մէջ նախատեսուած Եւրոպայի առաջնութեան եզրափակիչ փուլի չորս հանդիպումներուն:

Յիշեցնենք, որ Հայաստանի ազգային հաւաքականը Ազգերու լիկայի խմբային փուլի ընթացքին Նոյեմբերի 18-ին Երեւանի մէջ պէտք է մրցէր Հիւսիսային Մակեդոնիայի հետ:



Միխրարեանի Կոլային Փոխանցումը Նպաստեց «Ռոմայի» Յաղթանակին



ՌոեֆԱ-ի Եւրոպայի լիկայի խաղարկութեան առաջին հանգրուանի ընթացքին խաղական «Ռոմա»-ն մրցակիցի դաշտին վրայ 1-2 հաշուով առաւելութեան հասաւ զուգահեռական «Եանկ Պոլզ» ակումբի նկատմամբ: 14-րդ վայրկեանին դաշտի տէրերը առաջ անցան հաշուի մէջ. 11 մեթրանոց հարուածը դիպուկ կերպով հարուածեց Պիեռ Նասմէն: 69-րդ վայրկեանին «Ռոման» Պրուսֆ ֆերեսի կողմէ շնորհիւ հաւասարեցուց հաշիւը: 74-րդ վայրկեանին Կումբուլէն առաջ մղեց «Ռոման», Հայաստանի ֆուտպոլի ազգային հաւաքականի աւագ Հենրիխ Միխրարեանի փոխանցումէն յետոյ, որ փոխարինման մտաւ 59-րդ վայրկեանին:

Տիգրան Բարսեղեանի Կոլերը Յաղթանակ Ապահովեցին «Աստանային»

Ֆուտպոլի Ղազախստանի առաջնութեան 15-րդ հանգրուանի ընթացքին գործող ախոյեան «Աստանան» Տիգրան Բարսեղեանի երկու կոլերու ու կոլային փոխանցման օգնութեամբ 5:1 հաշուով արտագնայ յաղթանակ տարաւ «Օկէտպեսի» նկատմամբ:

Հայաստանի հաւաքականի յարձակողը 11-րդ վայրկեանին բացաւ խաղի հաշիւը, իսկ 29-րդ րոպէին նաեւ կրկնապատկեց այն: 34-րդ վայրկեանին Բարսեղեանը ստացաւ դեղին քարտ, իսկ 6 վայրկեան անց դարձաւ կոլային փոխանցման հեղինակ: Ղազախստանի ընթացիկ առաջնութեան մէջ 27-ամեայ ֆուտպոլիստը կոլերու թիւը հասցուց 3-ի:

Մէկ հանդիպում պակաս անցկացրած «Աստանան» 27 միաւորով երկրորդ տեղը կը գրաւէ եւ 11 միաւոր ետ է առաջատար «Կայրաթից»:



«Ռէալը» Վստահ Յաղթնակ Արձանագրեց «Պարսելոնայի» Դէմ Եւ Գլխաւորեց Սպանիոյ Լա Լիկան

Սպանիոյ ֆուտպոլի Լա Լիգայի 6-րդ հանգրուանի կեդրոնական խաղի ընթացքին «Պարսելոնան» սեփական դաշտին վրայ հիւրընկալեց Մատրիտի «Ռէալին»:

«Նոու Կամպ» մարզադաշտին վրայ կայացած թիւով 181-րդ «էլ Կլասիկոն» աւարտեցաւ մատրիտցիներու վստահ յաղթանակով՝ 3:1: Առաջին խաղակէսին գրանցուեցաւ ոչ-ոքի արդիւնք՝ 1:1, իսկ երկրորդին արդէն աչքի ինկան աւելի փորձառու հիւրերը, մասնաւորապէս Լուկա Մոդրիչին ու Սերխիօ Ռամոսը:

Այս յաղթանակէն յետոյ «Ռէալը» վաստակեցաւ 13 միաւոր եւ կրկին գլխաւորեց մրցաշարային աղիւսակը: «Պարսելոնան» երկրորդ պարտութիւնը կրեց ունեցած 5 խաղերու ընթացքին եւ այժմ 7 միաւորով կը զբաղեցէ 10-րդ տեղը:



«Մանչեսթըր Եունայթըտ» «Չելսի»՝ 0-0



Անգլիոյ ֆութպոլի ախոյեանութեան 6-րդ հանգրուանի մրցումներու ծիրէն ներս տեղի ունեցաւ 13-րդ դիրքը գրաւող «Մանչեսթըր Եունայթըտի» եւ 8-րդ դիրքը գրաւող «Չելսիի» միջեւ մրցումը, որ աւարտեցաւ առանց կոլերու:

Երկրորդ դիրքը գրաւող «Ասթըն Վիլլան» իր դաշտին վրայ մրցեցաւ 10-րդ դիրքը գրաւող «Լիծ Եունայթըտի» դէմ եւ կրեց այս տարեշրջանի իր առաջին պարտութիւնը:

3-րդ դիրքը գրաւող «Լիվըրփուլ» իր դաշտին վրայ մրցեցաւ 19-րդ դիրքը գրաւող «Շեֆիլտ Եունայթըտի» դէմ եւ արձանագրեց դժուար յաղթանակ մը, Ռուպերթօ Ֆիրմինոյի՝ 41-րդ եւ Տիոկօ ժոթայի՝ 64-րդ վայրկեաններուն նշանակած կոլերով:

«Ֆորմուլա 1». Լուիս Հեմիլթոնը Գերազանցած Է Միխայել Շումախերի Մրցանիշը

Բրիտանացի վարորդ Լուիս Հեմիլթոնն նոր մրցանիշ սահմանած է «Ֆորմուլա 1» դասի ինքնաշարժի աշխարհի առաջնութեան մէջ: Փորթուկալի մէջ կայացած «Մեծ մրցանակի» հերթական փուլի ընթացքին գործող ախոյեանը լաւագոյն արդիւնքով գրաւած է առաջին տեղը: Ան 92-րդ անգամ յաղթանակ տօնած է «Ֆորմուլա 1»-ի մրցուղիներու ընթացքին: Այդ ցուցանիշով Լուիս Հեմիլթոն շրջանցած է եօթակի ախոյեան, գերմանացի Միխայել Շումախերին եւ սահմանած ինքնաշարժի մրցավազքի նոր մրցանիշ:

Յաղթանակներու քանակով յաջորդ երեք տեղերը կը զբաղեցնեն գերմանացի Սեբաստիան Ֆետելը՝ 53, հայկական արմատներ ունեցող ֆրանսացի Ալեն Պրոստը՝ 51, եւ պրագիլացի վաղամեռիկ Աերտոն Սենան՝ 41:



Հայ Ֆուտպոլիստը Ֆրանսայի Մէջ Երկու Կոլի Հեղինակ Դարձած Է Փոխարինման Դուրս Գալէն Յետոյ

Ֆուտպոլի ֆրանսայի մինչեւ 19 տարեկաններու առաջնութեան 9-րդ հանգրուանի ընթացքին «Նանտը» հիւրընկալուելով 4:0 հաշուով վստահ յաղթանակ տարած է «Լէ Մանի» նկատմամբ:

18-ամեայ յարձակողական ոճի կիսապաշտպան Գոռ Մանուէլեանը «Նանտի» կազմին մէջ փոխարինման դուրս եկած է 70-րդ րոպէին եւ դարձած է երկու կոլի հեղինակ:

Գոռ Մանուէլեանը ծնած է 2002 թուականին Ստեփանակերտի մէջ: Ֆրանսայի Մ-19 նախորդ առաջնութեան ընթացքին ան 19 խաղերու ընթացքին դարձած էր 17 կոլի ու 9 կոլային փոխանցման հեղինակ:



ARMENIAN COUNCIL OF AMERICA
Political Action Committee

NOV. 3.2020 ENDORSEMENTS
VOTE FOR

PRESIDENT



Joseph Biden

U.S. SENATE



Jack Reed
Rhode Island



Dick Durbin
Illinois



Sara Gideon
Maine



John Hickenlooper
Colorado



Christopher Coons
Delaware



Ed Markey
Massachusetts



Mark Warner
Virginia



Jaime Harrison
South Carolina

UNITED STATES HOUSE OF REPRESENTATIVES



Jackie Speier
CA - CD 14



Jim Costa
CA - CD 16



Anna Eshoo
CA - CD 18



Christy Smith
CA - CD 25



Judy Chu
CA - CD 27



Adam Schiff
CA - CD 28




Tony Cardenas
CA - CD 29



Alexandria Ocasio-Cortez
NY - CD 14



Rashida Tlaib
MI - CD 13



Brad Sherman
CA - CD 30




Grace Napolitano
CA - CD 32



Ted Lieu
CA - CD 33



Jimmy Gomez
CA - CD 34



Karen Bass
CA - CD 37



Linda Sanchez
CA - CD 38



Lucille Roybal-Allard
CA - CD 40



Frank Pallone
NJ - CD 6



Gus Bilirakis
FL - CD 12

CA STATE ASSEMBLY



Luz Rivas
AD 39



Chris Holden
AD 41



Laura Friedman
AD 43



Jesse Gabriel
AD 45



Adrin Nazi
AD 46



Scott Wilk
District 21



Anthony Portantino
District 25



Herb Wesson Jr.
for County Supervisor District 2

LOS ANGELES CITY COUNCIL



Ed Chau
AD 49



Richard Bloom
AD 50



Miguel Santiago
AD 53



Anthony Rendon
AD 63



Mike A. Gipson
AD 64



David Ryu
LA Council District 4

ARMENIAN COUNCIL OF AMERICA PAC

Paid for by the
Armenian Council of America-PAC
1060 N. Allen Ave Suite 210
Pasadena, CA 91104